

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse

Rédaction du “Droschak,”

GENÈVE (Suisse)

A. R. F. BUREAU LIBRARY

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ՆՇԱՆԱՒՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

„Դրոշակ“-ի խմբագրութիւնը մարտ 27 թւակիր գրութեամբ մը դիմած էր եւրոպացի քանի մը յայտնի և հեղինակաւոր անձերու, խնդրելով անոնցմէ որ իրենց ձայնը բարձրացնեն հայկական խնդիրը քաղաքականութեան օրակարգն անցնելու, օգտւելով զինաթափութեան խորհրդաժողովին մօտալուստ գումարումէն:

Այդ առթիւ խմբագրութեան ստացած պատասխաններէն նախորդ թւին մէջ հրատարակած ենք Ռիչչիօթի Գարիբալդիի և Ամիլյար Զիպրիանիի նամակները. այս անգամ ալ „Դրոշակ“-ի ընթերցողներուն կը հաղորդենք պր. Ժօրժ Ֆալօնի մէջ ուղղած գրութիւնը:

Պր. Ժ. Ֆալօն, որ տնօրէն խմբագրապետն է „Le Genevois“ թերթին, երեսփոխան զւիցերական Ազգային Ժողովին, նախարար հանրային կրթութեան Ժընէվի հանրապետութեան և պետը Ժընէվի կանտօնի արմատական կուսակցութեան, — Զւիցերիոյ հանրային գործիչներուն ամէնէն խոշոր գէմքերէն մէկն է: Իր կորովի գրիչը և մանաւանդ հոնտորի առաջնակարգ տաղանգը միշտ գործ դրած է պաշտպանելու արգարութեան և մարդկայնութեան սկզբունքները այն բոլոր առիթներուն մէջ, որ ներկայացած է օրագրողի և հանրային գործիչի իր երկար ու բեղուն ասպարէզին վրայ:

GENÈVE, 7 Mai 1899.

Ժընէվ, 7 մայիս 1899

A la Rédaction du Droschak,

Messieurs,

Depuis 20 ans vous subissez toutes les horreurs de la plus sanglante persécution; on vous tue, on vous pille, on viole vos femmes et vos filles. L'Europe ou plutôt la diplomatie européenne, qui poursuit des intérêts dynastiques, vous a lâchement abandonnés; je ne vois rien qui puisse vous engager à compter sur elle aujourd'hui plus qu'hier. Votre défense est en vous seuls; ce n'est que par l'énergie de votre protestation et de votre résistance que vous finirez par grouper autour de vous assez d'indignations d'hommes libres pour faire enfin une révolte efficace de l'opinion publique contre vos bourreaux.

Si l'heure de la justice se fait attendre vous aurez au moins, par votre attitude courageuse, montré que vous êtes dignes des réparations futures, et vous aurez rendu aux opprimés, qui l'attendent partout, le service d'avoir ajouté une page glorieuse au redoutable dossier qui se forme contre les oppresseurs.

Comptez sur mes sympathies profondes, malheureusement impuissantes.

Votre

G. FAVON.

„Դրոշակ“-ի խմբագրութեան

Պարոննե՛ր,

Գա՛ն տարի է դուք ամէնէն արիւնուշտ հայաճանքի բոլոր սարսափները կը կրէք. ձեզ կը սպաննեն, ձեզ կը թալանեն, ձեր կիներն ու աղջիկները կը բռնապղծեն: Եւրոպան կամ աւելի եւրոպական դիւանագիտութիւնը, որ արքատոնմային շահերը առաջ կը քշէ, վատօրէն ձեզ երեսի վրայ ձգեց. բան մը չեմ տեսներ որ զրդէ ձեզ երեկընէ աւելի՛ այսօր անոր վրայ յոյս դնել: Դուք էք ձեր միակ պաշտպանները. ձեր բողոքի կորովովը եւ ձեր դիմադրութեամբ միայն պիտի կրնաք վերջնապէս շուրջնիւղ արծարծել ազատ մարդերու բաւականաչափ զայրոյթ մը, ձեր դահիճներուն դէմ հանրային կարծիքի արդիւնազօր ընդվզում մը առաջ բերելու համար:

Եթէ արդարութեան ժամը ուշը կը մնայ, գոնէ, ձեր արիական ընթացքով, ցցուցած պիտի ըլլաք թէ արժանի էք ապագայ գոնացումներու եւ բարեկամական ծառայութիւնը մատուցած պիտի ըլլաք հարստահարածներուն — որոնք ամէն կողմէ կը սպասեն անոր, — փառապանծ էջ մը աւելցնելով դատաստանագրերու այն զարհուրելի կապոցին վրայ, որ բռնաւորներուն դէմ կը կազմէի:

Վստահ եղիք իմ խորին համակրութիւններուս վրայ, որոնք դժբախտաբար անզօր են:

Ձեր

Ժ. ՖԱՎՈՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՍԱ ԹԻ՛ ՖԱՐՍ

I

Գեղեցիկ է անունը, — Խ ա ղ ա ղ ու թ ե տ ն ժ ու փ: Եւ Հօլանդիայի համեստ քաղաքը, իբրև թափառաբեմ, գուցէ իրաւունք ունի պարծենալու, որ մեր արիւնոտ և կուսմով դարում իր անւան հետ է կապուում այդպիսի մի ժողով. . .

Յոգնած պատերազմներից, ջարդած հրացանի և թնդանօթի ծանրութեան տակ, ուժասպառ աւերիչ տուրքներից, որ յանուն խաղաղութեան և ապահովութեան վճարուում է զօրանոցներին և զինուորականութեան — յուսադրւած, վերջապէս, այն եզակի դէպքից, որ զինաթափութեան հրակէրը այս անգամ բխում է ոչ թէ իդէալիստ մտածողի կամ յափշտակւած գրողի համեստ սենեակից, այլ բռնապետութեան ներկայացուցիչների գահերի բարձրութիւնից, — այսօր աշխարհիս խաղաղասէր տարրերը սպասում են մեծադորոգ ժողովի բացման և մանաւանդ նրա վախճանին:

Ի՞նչ կը լինի այդ վախճանը. — սրտաբոյգ, յեղափոխիչ, ցնցող մի դրամա, թէ խեղկատակ և անարգ մի ֆարս. . .

II

Ժամանակակից անտեսական-քաղաքական կեանքում խաղաղութեան գործին վտանգ սպառնացող խնդիրներից մէկը անշուշտ փ ո ք ր ի կ ա զ գ եր ի ա ն կ ա խ ու թ ե ա ն խ ն դ ի ը ն է: Ծնունդ առնելով դեռ 18-րդ դարի վերջերից և գոյութիւն ունենալով իբրև օրւայ հարց, մի ամբողջ դար, — ստրուկ ազգերի ազատագրական շարժումը կատարեալ իրաւունք ունի վերջնական լուծում ստանալու այժմ, իբրև շատ պարզ և հասուն մի խնդիր:

Կա Հէի ժողովից չի պահանջուում ուրեմն գլուխ կոտրել և հարցեր ստեղծել: Վեանքը ինքն արդէն ստեղծել և հրապարակ է բերել այդ հարցերը: Հարկաւոր է միայն չփակել դռները, ինչպէս այդ փորձում են արդէն մի քանի կառավարութիւնների ներկայացուցիչները, և ոչ էլ խցկել ականջները, ինչպէս արդէն պատրաստուում են անել դիւանագիտութեան մեծանուն անդամները: Տանջող և նահատակ ազգերը — այդ գիտնք արդէն հեռագիրներից — ուղիւղներ են պատրաստում և պատգամաւորութիւններ են կազմում խնդրելու Խաղաղութեան ժողովից՝ բաւական համարել իրենց թափած արիւնը, տւած զոհերը, կրած տանջանքները:

«Մենք ձեզանից ոչինչ չենք պահանջում, ասում են նրանք — մի իրաւունք միայն ճանաչեցէք մեր վերաբերմամբ — իրաւունք ապրել մեր հայրենիքում, սիրել և կուել նրա առաջդիմութեան համար այնպէս, ինչպէս դուք սիրեցիք և կուեցիք ձերինների համար. . .»

Եւ եթէ այդ անհրաժեշտ և արդար պահանջը, որ այժմ արտայայտուում է խնդրիքի ձևով, այս անգամ էլ բաւարարութիւն չտանայ, թող չգանգատուեն զ ի ն ա թ ա փ ու թ ե ա ն ժողովները, որ շատ չանցած, ստիպած կը լինեն նորից զէնք վերցնել նորից զինաւորել. . .

III

Զինաթափութիւնը զէնքերը զօրանոցներում փակելու մէջ չէ: Քանի գոյութիւն ունի վտանգը, ամէն մարդ, ամէն ազգ իրաւունք ունի զինւելու: Ահա այդ վտանգը առաջ բերող պայմաններն են, որոնք պէտք է վերացեն մէջտեղից և որոնցից մէկն է շղթայակապ ազգերի դրութիւնը այսօր: Եւ եթէ մի համաժողով, մի միապետ կամ մի պետութիւն ենթադրում է, թէ կարելի է խեղդել, մեռցնել որևէ մէկին այդ ազգերից — նա սխալուում է չարաչար: Երեք տարուց յետոյ, մենք ոտք կը դնենք մի նոր դարու շէմքի վրայ, — մի դար, որ բերում է մեզ սօցիալական վեթիսարի խնդիրներ, — խնդիրներ, որոնց շրջանում կատարեալ անաքրօնիզմ պիտի երևայ ամէն մի հալածանք և բռնութիւն որևէ ազգի, լեզուի, կամ կրօնի դէմ: Եւ ահա այդ երևոյթը, միացած ստրկութեան մէջ մնացած ազգերի վրէժխնդրութեան տասնապատկւած զգացմունքի հետ՝ բնականաբար այնպիսի կերպարանք կը տայ ազգերի ապստամբութեան գործին, որին չի դիմանայ ոչ մի զինաթափութեան դաշնագիր, ոչ մի վեհաժողով վճիռ: Կան պատմական անհրեքելի փաստեր: Կրօնական հալածանքը սովորական էր միջին դարերում, բայց նա անաքրօնիզմ է այժմ: Ազգայնական հալածանքը, որ տանելի է ներկայ դարում, իբրև մի նոր անաքրօնիզմ գոյութիւն չպիտի ունենայ ապագայում, — դա հայրենասէրների իղձ չէ, այլ էվոլուցիայի անխախտ օրէնք. . .

IV

Խաղաղութեան ժողովը այս և ուրիշ տեսակ հարցերի դէմ մի բան միայն ունի ասելու, — այն է, որ նա զինաթափութեան վերաբերեալ խնդիրներից դուրս՝ պիտի կազմակերպէ մի ջ ա զ գ ա յ ի ն դ ա տ ա ր ա ն այն բոլոր հարցերի համար, որոնք կարող են սպառնալ խաղաղութեան: Բայց արդե՞օք այդ դատարանը կարող կը լինի ազգերի իրաւունքը անկախ և արդար պաշտպանել: Արդե՞օք միջազգային դատարանը այնպէս կը լինի կազմած, որ նրա առաջ խտրութիւն չլինի, օրինակ՝ թոյլ լեհի և հզօր ռուսի կամ գերմանացու, հպատակ իրլանդացու և տիրող անգլիացու: Համար: Արդե՞օք այդ դատարանը արդարութեան տեսակէտով պիտի չափի իւրաքանչիւր ազգութեան պահանջը և եթէ արդարութիւնը թոյլի, անզէնի կողմն է՝ հնարաւորութիւն պիտի ունենայ ստիպել ուժեղին և զինւածին յարգել թոյլի և անզէնի իրաւունքները:

Եթէ «միջազգային դատարանը» պիտի յենւի «միջազգային իրաւունք» կոչուած գիտութեան վրայ — այն

գիտութեան, որ հիմնական խտրութիւն է դնում քաղաքականապէս անկախ և հպատակ ազգերի իրաւունքների որոշման մէջ — այն գիտութեան վրայ, որ միմիայն տերութիւն կազմող ազգութիւններին է իրաւունք տալիս՝ 1) ինքնապաշտպանութեան, 2) որոշ երկիր ունենալու, 3) ներքին գործերում անկախ լինելու, 4) յարգանք ու պատիւ վայելելու, 5) միջազգային յարաբերութիւնների մէջ մտնելու և 6) սեփական շահերը պաշտպանելու, — ապա շատ ազգերի համար կը մնայ՝ խաղաղութիւնը պաշտպանելու համար՝ դիմել միևնոյն միջոցին, ինչ միջոց վաղուց ընտրել է ինքը Եւրոպայան: Համայն աշխարհը խաղաղութիւն է ցանկանում, և յանուն այդ խաղաղութեան՝ ամբողջ կէս դար է Եւրոպայան զինուում է ոտքից մինչև գլուխ: Թողէք ուրեմն, որ ստրուկ ազգերն էլ յանուն նոյն այդ խաղաղութեան, շարունակեն զինուել, և զէնքը ձեռքին ոտքի կանգնեն նրանց դէմ, որոնք դարերից ի վեր խլել են իրենցից այդ երջանիկ խաղաղութիւնը...

V

Ինչ վերաբերում է յատկապէս մեզ, հայերիս, — մենք, որ յուսահատուած Եւրոպայի արդարամտութիւնից, վաղուց արդէն ընտրել ենք կուրի ձանապարհը, մենք, որ ոչ մի ժողովուրդի չենք կարող խորհուրդ տալ հաւատարու ոչ միայն Եւրոպայի դիւանագիտութեանը, այլ և նոյն իսկ նրա «ազատ» համալսարանների ամբիոններից աւանդուող «միջազգային իրաւունքին», — մենք, ասում ենք, բաւականաչափ հիմք ունենք պահանջելու չէի ժողովից, որ հայկական և մականերունական հարցերը ստանան, այդ տեղ ուր ուր ուր շարք ազգայնական ուրիշ խնդիրների և հայկական ու մակեդոնական հարցերի մէջ աւելանալն այն զանազանութիւնը կայ, որ վերջինները վաղուց արդէն «միջազգային քաղաքական հարցերի» իրաւունք են ստացել և մօտ կէս դար է արդէն, որ Թիւրքիան զոհուած է այն ներքին անկախութիւնից իր քրիստոնեայ հպատակների վերաբերմամբ, որ պահանջել են ուրիշ պետութիւնները: Մեր պահանջը ուրեմն հիմնուած է այնպիսի պայմանների վրայ, որոնք համապատասխանում են նոյն իսկ «միջազգային իրաւունք» գիտութեան սկզբունքներին — մի գիտութեան, որ ինչպէս տեսանք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ հօրերի կամքի ու շահերի սրբագործումը միայն:

Այո, գեղեցիկ է անունը, — Խաղաղութեան ժողով: Բայց եթէ այդ գեղեցկանուն ժողովից չի կարելի սպասել մի յեղափոխիչ, ցնցող դրամա, — ապա, դոհացում տալով հայկական և մակեդոնական պահանջներին, նա գոնէ խուսափած կը լինէր լաւ չէի համաշխարհային բեմի վրայ խեղդատակ, անարգ մի ֆարս խաղալուց...

ՁԷՅՄՍ ԲՐԱՅՍ

«ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ՎԵՐՁԻՆ 20 ՏԱՐՈՒՄ» *)

Հայոց հարցի առթիւ ստեղծուած ահագին գրականութեան մէջ հազագիւտ են այնպիսի գրածքներ, որոնք ճշգրիտ լուսաբանութիւն են տալիս Յաճկահայաստանի վերջին աղէտների և ներկայ տխուր իրականութեան: Ասպարէզ եկող բազմաթիւ «քննադատներից», «պատմաբաններից» շատ քչերն են ջանք տուել իրենց՝ հանգամանքների խորքը թափանցելու և հայկական ողբերգութեան իսկական պատճառները որոնելու: Սովորաբար հարցի մակերևոյթի վրայ պտոյտ են գալիս, ասելով՝ Հայաստանի անցքերը կրօնական անցքեր են, հայը կոտորում է, որովհետև քրիստոնեայ է, կամ թէ պատճառաբանում են թէ հայ յեղափոխականները զրդիչ եղան ջարդերի: Եւ նման բազմաթիւ անհեթեթութիւններ:

Ձէյմի Բրայսի գրածքը — եթէ մի կողմ թողնենք մի երկու ակնբեր և սխալանքներ, որոնք կարող են լինել միայն չարամիտ գաղտնառքների (insinuation) արդիւնք — միանգամայն կազդուրիչ է մտքերի այսպիսի մի խառնակ վիճակում: Հայոց ձգնաժամը ներկայանում է այդտեղ որպէս անխուսափելի ծնունդ որոշ պատճառական շարքերի: Հայաստանի ջարդերը պէտք էր կատարէին անհրաժեշտաբար, անկախ յեղափոխական ջարդերից, անկախ մահաբազան կրօնամոլութիւնից: Հեռատես աչքը այդ կարող էր նախատեսել դեռ 70-ական թւերին, երբ հայերի մէջ սկսեւ էր ազգային շարժում, երբ հայ ժողովուրդը սթափուելով դարերի ստրկացնող խաւարից, սկսել էր տենչալ մի աւելի բարձր մարդկային կացութեան, երբ վերջապէս հայկական դատը իբրև քաղաքական հարց պաշտօնապէս դրւել էր Եւրոպայի առաջ:

1878-ի անցքերը, ասում է Բրայս, մեծ ազդեցութիւն ունեցան թէ սուլթանի և թէ նրա քրիստոնեայ հպատակների վրայ: Բոլգարիայի ազատագրութիւնը յոյս ներշնչեց կրթուած հայերի մէջ, որ Եւրոպայան իրենց հիմար ևս կ'անէ նոյնը, ինչ որ արաւ բոլգարների համար: Այն միտքը՝ որ հայերը Անգլիայի հովանաւորութեամբ պիտի ձգտէին մի ինքնավար Հայաստան ստեղծել Բոլգարիայի օրինակով, և որ հայերին արած այս կամ այն զիջումները կարող էին սկիզբ լինել մի այդպիսի ինքնավարութեան — այդ միտքը ամենագլխաւոր պատճառն էր, որ մղեց սուլթանին բոլգարական սարսափները աւելի մեծ չափերով կրկնելու Հայաստանում:

Ընդարձակ մի տեսութեան մէջ քննում է Բրայս հայոց հարցի պատմութիւնը վերջին քսան տարիներում, «թշուառութեան, մարտիրոսութեան, յուսահատութեան, մահաւան պայքարի տարիներ»... «Եւ քննում է նա երեք տարբեր տեսակէտներից, 1) դիւանագիտութեան, 2) սուլթանական վարչութեան, 3) հայ ազգային շարժման տեսակէտից: Հայոց հարցի դիւանագիտական վարկեանը շօշափելիս՝ նա անխնայ մտրակում է թէ Լօբանօյների և թէ Լօրդ Բիկօնսֆիլդի մարդասպան քաղաքականութիւնը, հայկական անվերջ մարտիրոսութիւնը նկարագրելիս՝ նա զայրագին խարաղանում է թիւրք յոռի

*) Der Christliche Orient 1897 N 11, 12.

վարչութիւնը: Գլխատնօնական շանթող լեզուի մէջ քաղաքակրթած անգլիացու անկեղծ ցասունն է արտայայտուում: Նրա ջատագովականը հայոց ազգային շարժման, նրա խօսքերը հայ յեղափոխական շարժման անհրաժեշտութեան մասին՝ վկայում են նրա ճիշդ ու լուսաւոր հայեացքը իրականութեան վրայ: Ամբողջ տեսութեան միջից սև գծով անցնում է՝ ուսուանգլիական հակամարտութիւնը — հայոց աղէտների մեծագոյն պատճառը:

Գրում է Բրայս, թէ ինչպէս Բերլինի վեհաժողովը Անգլիայի թելագրութեամբ ջնջեց Ս. Ստեֆանոյի հայոց օգտին սահմանած 16-րդ յօդուածը և փոխարինեց 61-րդ յօդուածով: Խօսում է Կիպրոսի տխուր դաշնագրի մասին, որով բրիտանական կառավարութիւնը ըստանձնեց միանգամայն հովանաւորի պաշտօնը թէ Թիւրքիայի համար ընդդէմ Ռուսիայի և թէ հայերի համար ընդդէմ Թիւրքիայի: Ի՞նչ ճանապարհով արդեօք — հարցնում է Բրայս — Անգլիան պիտի ապահովէր հայ ժողովուրդի կեանքը, գոյքը, պատիւը... 1856-ի Պարիզի դաշնագրի օրից անցած 22 տարւայ փորձը աչքի առաջ էր. սուլթանները անուղղելի են և երբեք ըէֆօրմների մասին տւած իրենց խոստովանելը չեն իրագործում: Դեռ 1855 թւին, ասում է Բրայս, գններալ Սըր Փ. Վիլեամ գրում էր, որ հայկական նահանգները ամէն տեսակէտից տառապում են սիստեմական անարգ հարստահարութիւնների տակ, և բնորոշում էր թիւրք կառավարութիւնը իբրև բռնակալութեան մի այնպիսի մեքենայ, որ իր նմանը չունի ամբողջ աշխարհում:

Բռնութիւնը մնում էր միակ ճանապարհը սուլթանի վրայ ազդելու համար: Բայց ո՞վ գործ դնէր այն... Ողբերգութիւնը այդտեղից է սկսւում: Ռուսաստանը ետ քաշւեց, Անգլիան էլ չուզեց սպառնալիք կարգալիք հովանաւորեալ սուլթանին, մի գուցէ այդպիսով մղէր նրան Ռուսիայի գիրկը: Նա բաւականացաւ նստաներով, յիշատակագրերով, բողոքեց շարունակ Հայաստանում կատարւած անհամար ոճրագործութիւնների դէմ, բողոքեց դեսպանների, հիւպատոսների միջոցով: Գրանով էր նա կերակրում հայերին. դրանով էր հանգստացնում իր խիղճը: Բայց այդ ճանապարհով նա աւելի էր գրգռում սուլթանին, աւելի էր թշնամացնում նրան հայերի հետ, աւելի էր վատթարացնում վերջիններիս դրութիւնը: Անգլիան ջանաց սկզբից միւս պետութիւնների ուշադրութիւնը ևս հրաւիրելու Հայաստանի վրայ, և 1883-ին Բիսմարկի ցինիկ պատասխանն առաւ, թէ Գերմանիան ամենևին չի էլ մտածում հայերի մասին: Ֆիասկօ Փիասկօյի վրայ: Եւրօպական համաձայնութիւն կազմակերպելու յոյսը իզերև ելաւ:

Գրում է Բրայս, թէ ինչպէս Ալեքսանդր II-ի մահից յետոյ, իր որդու օրով, ուսու կառավարութիւնը բացարձակ թշնամական դիրք բռնեց դէպի հայութիւնը, թէ ինչպէս ուսուացման քաղաքականութեան հետ միասին սկսեցին խստութիւններ ուսահայերի շարժման դէմ յօգուտ իրենց տաճկահայատակ եղբայրների: 1884 թւից, ասում է Բրայս, Կ. Պօլսում՝ հասկացան արդէն, որ ուսուաց դեսպանը ոչ մի լուրջ և անկեղծ ջանք չպիտի անէ՝ թիւրք վարչութեան մէջ որ և է հիմնական բարեփոխում մտցնելու:

Նկարագրելով թիւրք կառավարութեան այլանգա-

կութիւնները սկսած Համիդ II-ի գահակալութեան օրից և բնորոշելով այդ կառավարութիւնը իբրև «կազմակերպւած մի աւազակութիւն», Բրայսը անցնում է իր տեսութեան երրորդ մօմենտին՝ հայոց ազգային շարժման: Նկարագրում է գիւղական հայ ազգաբնակչութիւնը, պարզ, նահապետական, խաղաղասէր, տեղ-տեղ (մանաւանդ լեռնոտ վայրերում) քաջասիրտ, բայց ամէն տեղ անգէն: Զատագովում է զէթութունցու դիւցազնութիւնը, համեմատելով նրան սև-լեռնցիների հետ, յիշատակում է 1895-96-ի հերոսական ապստամբութիւնը: Խաղաղ էին հայաստանցիք, ասում է Բրայս, բայց նրանց հաւատարիմ հպատակութեան մասին խօսք չէր կարող լինել, իհարկէ, չի կարելի պահանջել կալանաւորից, որ նա հաւատարմութեան զգացմունք տածէ դէպի աւազակային խմբի պարագլուխը:

1877-ից սկսւում է խմորումը հայ կրթած շրջաններում: Պատերազմը, Բօլքարիայի ազատումը, ուսուաց զօրքի ներկայութիւնը Հայաստանում, Բերլինի վեհաժողովում 61-րդ յօդուածի ներմուծումը, Անգլիայի բացարձակ համակրութիւնը՝ մի հզոր մղում տւեցին հայերի ազգասիրական տենչերին: Աշնան 1880-ին, ասում է Բրայս, ես նորից այցելեցի ներսէս պատրիարքին, «հայ ազգի արժանաւոր առաջնորդին», տեսնեցայ նաև շատ ուրիշ ականաւոր հայերի հետ, բոլորն էլ մեծամեծ յոյսեր էին տածում...:

Բայց եւրօպական համերգը միշտ կաղեց, հրաժարելով ճշողական միջոցներից: Արդիւ Համիդ սկսեց այն ժամանակ նախամտածւած հարստահարութիւնների մի քաղաքականութիւն, որ հասունանալով՝ դարձաւ ոչնչացման մի սիստեմ: Նա իրեն սկզբունք ընդունեց մի տաճկի դեռ 10 տարի առաջ արտասանած այս նշանաւոր խօսքերը. «հայկական խնդիրը ոչնչացնելու միակ ճանապարհն է՝ հայերի ջնջումը»:

Եւ սկսեց կ ա զ մ ա կ եր պ ա ծ հալածանքը իր յատուկ օրգաններով՝ տաճիկ ոստիկանութեամբ, քրդական հրոսակներով, համիդիէ հեծելազօրքով: Հալածւեց հայ միտքը, մամուլը, դպրոցներն ու սահմանադրութիւնը, հայի կեանքն ու գոյքը: Սկսեցին հայերի խրմբական բանտարկութիւնները, դժոխային տանջանքները բանտերում և այլն: Այդ ամէնը՝ մէկ նպատակով — նւաղեցնել հայ տարրը իր բնիկ հայրենիքում:

Բարբարոսութիւնը աճում էր ամսէ ամիս, օրէցօր. ըէֆօրմների յոյսը մարել էր...:

Ահա այն ժամանակ — այստեղ խօսում է Բրայսը հայ յեղափոխական շարժման սկզբնաւորութեան մասին — խուլ, կրաւորական դժգոհութիւնը հայերի մէջ փոխւեց զայրագնութեան: Արտասահմանում կազմակերպւեցին յեղափոխական կոմիտէներ, որոնք սկսեցին դրգուել ժողովուրդը դէպի ապստամբութիւն: Յեղափոխական կուսակցութիւնները քարոզում էին, որ Եւրօպայից մանաւանդ Անգլիայից՝ ոչ մի օգնութիւն յուսալու չէ, և որ յեղափոխութիւնը վերջին ապաստանն է հայրենիքի բոլոր բարեկամների համար...:

Վաղուց արդէն — գրում է Բրայս — ընդհանուր մի ապստամբութիւն պիտի պայթէր տաճկական ամբողջ կայսրութեան մէջ, որովհետև դա է բնական դարմանը մի այլանգակ ու անբուժելի կառավարութեան դէմ... Հայերը, անտարակոյս — շարունակում նա — ապստամ-

բելու լիակատար բարոյական իրաւունք ունէին. ապստամբութիւնը, եթէ հնարաւոր լինէր, արդար բան էր, քանի որ այդ դէպքում նա մի փորձ էր՝ մարդկանց կեանքն ու պատիւը պաշտպանելու:

Բայց ժողովուրդը անպատրաստ էր, անզէն էր. այդ հիման վրայ և Բրայս յանդիմանում է հայ յեղափոխականներին: «Աջողութիւնը այնքան անյուսալի էր, որ հայերի բոլոր բարեկամները խստիւ դատապարտում էին բռնի ուժի գործադրութիւնը... Համբերութեան քարոզներն ու յորդորները ապարդիւն եղան... 1890-ին նիւ-Յօրկում ես հրաւիրուած էի հայոց մի մեծ ժողովի մասնակցելու. ես համբերութեան սովորական խորհուրդները տւի նրանց, բայց իմ խորհուրդները ընդունւեցին այնպիսի մի եղանակով, որը ցոյց էր տալիս, թէ որ աստիճանի արդէն առաջ էր անցել յեղափոխական տրամադրութիւնը: Սպանութիւնների, տանջանքների լուրերը, որ ամէն փոստով ստանում էին այդ տարագրեալները իրենց հայրենիքի բարեկամներից, դազան էին դարձնում նրանց, և ով որ կապոյտ գրքերի մէջ կարդացել է նոյնանման տեղեկութիւններ, չի կարող չհամոզուել, որ այդպիսի մի բռնակալութեան դէմ (որպիսին թիւրքականն է) ամէն մի ջոց արդարացի է...»

Այդպիսով Բրայս մի կողմից յարձակում է յեղափոխականների վրայ, միւս կողմից արդարացնում է նրանց, քանի որ տաճկական բարբարոսութիւնների և հայկական ճգացող թշուառութեան դիմաց այդ յեղափոխականները ուրիշ կերպ չէին կարող զգալ, մասձեւ ու վարուել: Նշանաւոր անգլիացին կարծէք խոստովանել է ուզում, որ յիրաւի կան վայրկեաններ, երբ խոհեմութեան ու համբերութեան քարոզները միանգամայն անտեղի են ու անհեթեթ... Միւս կողմից պէտք է ընդգծենք և այն կէտը՝ որ Բրայսը, թէև անուղղակի, բայց և այնպէս յետ է մղում հայ յեղափոխականներին ուղղաձ անմիտ ամբաստանութիւնները, իբր թէ նրանք եղան դրդող և սկզբնապատճառ հայոց ջարդերի և ներկայ ճգնաժամի:

ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ ՎԱՆԱՅ ԾՈՎԻ ՎՐԱՅ

Ուշ գիշերին ծոփն է խաղաղ
 Զրեր վճիտ ու յստակ,
 Զինջ է երկինք միապաղաղ,
 Աստեղազարդ, կապուտակ:

Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ
 Սև ամպերով մռայլեց,
 Քամի բրդաւ, քամի անսանձ,
 Եւ ծովակն այլայլեց:

Կուրծքն ուռած ու փրփրուն,
 Ալիքներն ահագին,
 Սուգ ու հառաչ գոռ ու գոչին
 Թռան ծոցից ծովակին:

— Միրուն ծովակ, ասա՛ դու մեզ,
 Էլ ի՞նչ նորից յուզեցիր:

Այն ի՞նչ բօթ էր, որ բերեց քեզ
 Քամին մոլար, անձանձիր:

Արդեօք ողբեր ու հառաչանք
 Երգեց նա քո ականջին,
 Կոյսի մրմունջ, մօր հեծեծա՛նք,
 Թէ՛ ճիչ անմեղ մանկիկին... »

Արիւնապատ մեր ձորերում
 Հիւսել է իր՝ մեղեդին,
 Թէ՛ աւերակ մեր գիւղերում
 Կազմել երգը ցաւագին... »

Ա՛խ այդ ցաւոտ սև երգերով
 Մեզ քուն ասին մեր մայրեր,
 Ու սարսափի զրոյցներով
 Խլացրին մեր ճիչեր:

Եւ այնուհետ շատ տարիներ
 Նոյն երգերը տիրագին
 Սև դարձրին կարմիր օրեր,
 Վախով լցրին մեր հոգին... »

Մի անգամ էլ մեր լեռներում
 Մի հողմ՝ փչեց ահաւոր,
 Էլ արտասուք նա չէր երգում,
 Ոչ ողբ ասում սգաւոր:

Սև լեռների մռայլ ծոցից
 Խլած հսկայ գոչիւններ,
 Սև ժայռերի գոչիւններից
 Նա կազմել էր իր երգեր:

Պղտոր-կարմիր գետը յուզած
 Այնտեղ ունէր իր բաժին,
 Մայր բնութիւնն էլ զարհուրած
 Միացել էր այդ երգին... »

Երբ ժայռերը գոռում էին,
 Հայն ի՞նչպէս լուռ կենար,
 Երբ լեռները դողում էին,
 Մեր սիրտն ի՞նչպէս դիմանար:

Եւ խլեցինք մենք պատեանից
 Սրեր վաղուց մոռացած,
 Եւ դուրս ընկանք մեր տներից
 Ի՛նչ սուրբ վաթան աւերած... »

Լուռ կաց, քամի, մի փչեր, լուռ,
 Շատ յուզեցիր ծովակին,
 Թող շշջայ մեղմիկ գեփիւռ,
 Թող, հանգիստ թող ծովակին:

Լուռ կաց, ծով, դարերի լալկան,
 Էլ բաւ այսքան հառաչներ... »
 Մենք զօր ունինք սուր, հրացան,
 Շուտ վերջ կ'առնեն քո ցաւեր... »

Թող միայն մեզ շուտով լողանք,
 Թող որ հասնենք այն ափին:

Յե՛ս, լուում են ձիջ, հառաչանք,
Աղերս ու ողբ անմեղին...

Դէ՛հ, ընկերներ, զարկե՛նք թիեր,
Հգոր բազկով միասին,
Մօտ է ամբո, հէ՛, անպէրներ,
Հա՛, հասանք ձեր հաւարին...

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

ԵՐՐՈՐԻ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ 4/16 ապրիլ 99

Իմ անցեալ նամակը վերջացրի այս խօսքերով.
„... Հայերին յետ մղելու համար Գօրծնինը քաղաքա-
կանութիւնը ոչ մի միջոցի մէջ խարութիւն չի դնուի: Բայց
այդ դառն ճշմարտութիւնը ապացուցանելու համար ինձ
հարկաւոր է կանգ առնել երրորդ փաստի, այն
է՛ հայոց դպրոցների փակման և նրանց կալածանքի
յափշտակման վրայ, որ սեղի ունեցաւ այնքան վայրե-
նի, այնքան անսովոր կերպով...“ Այս նամակով ու-
զում եմ կատարել խոստումս, բայց հարցը աւելի պար-
զած լինելու համար թոյլ տուէք ինձ մի փոքր հեռւից
սկսել:

Սրանից դեռ 63 տարի առաջ հայոց եկեղեցու հա-
մար կազմած „մեծագործ“ „Գօրծնին“ -ով, մեր հո-
գեւորականութիւնը և առհասարակ Ռուսաստանի հայ
համայնքը պաշտօնապէս իրաւունք ստացաւ ունենալու
իր սեփական եկեղեցական-ծխական դպրոցները: Երես-
նական և քառասնական թւականներին, երբ Անդր-
կովկասը դեռ չէր մաքրել իր վրայից ռուս-պարս-
կական և ռուս-թիւրքական պատերազմների արժան
հետքերը, բնականաբար, դժուար էր ուժգին կերպով
նւիրել դպրոցական գործին: Բայց 50-ական թւա-
կաններին, երբ երկրում վերջնապէս հաստատուեց
խաղաղութիւն և միւս կողմից հայոց հասարակութեան
մէջ էլ եւրոպական և ռուսաց մտքի զօրեղ ցնցումնե-
րի պատճառով, սկսեց մտաւոր վերածնութիւն, կով-
կասեան կեանքի մութ հորիզոնի վրայ սկսեցին պլա-
շալ լոյսի և գիտութեան թոյլ կայծեր, երևան
եկան եկեղեցական-ժողովրդական դպրոցներ: Մատթէոս
կաթողիկոսը, որ իր շատ թերութիւնների հետ միասին
ունէր մի շատ մեծ արժանաւորութիւն — անսահման
սէր, դէպի ռուսամարանը — հիմք դրեց մեր ժողո-
վրդական դպրոցներին, օգուտ քաղելով այն իրա-
ւունքից, որ օրէնքը տալիս էր հայոց հոգեւորականու-
թեան պետին: Ոչ աւելի քան 15-20 տարւայ ընթաց-
քում, մանաւանդ 70-նական թւականներից սկսած, երբ
Վովկասի հայոց մամուլի մէջ մի գործը պրօպագանդա
սկսեց յօգուտ, ժողովրդական կրթութեան, — այդ
դպրոցների ուժը և թիւը աճեց ու հասաւ մի պատ-
կանելի մեծութեան: Երբ 1882 թւին, Գէորգ կաթո-
ղիկոսի հաւանութեամբ, Թիֆլիզում կայացաւ առաջին
Հայոց Ռուսացական ընդհանուր ժողովը, հայոց դպրո-
ցական շարժման այդ նշանաւոր հանդէսը, — շատերը

առաջին անգամ միայն տեսան և զգացին, թէ ինչ
հսկայական քայլեր է արել կրթութեան գործը առա-
ջաւոր Ասիայի մի փոքրիկ ազգի մէջ, որ, չնայած իր
խաւար անցեալին, հերոսական ջանքեր էր թափում
կուլտուրական կարագետ լինելու երկրի մէջ: Ծողովը
ցոյց տուեց, որ Վովկասը պատած է հայոց ժողովրդա-
կան դպրոցներին մի ամբողջ ցանցով — մօտ 500 դպ-
րոցներ 20 հազար աշակերտներով և մօտ 1,000 ու-
սուցիչներով ու վարժուհիներով, որոնք անձնիրաբար
ընդհանուր կրթութիւն և գրագիտութիւն են տարա-
ծում այն վայրերում, ուր տարիների ընթացքում թա-
գաւորել է միմիայն կոպիտ բռնութիւն և տգիտութեան
բթացնող ոգին...

Յարաբախտաբար 82-ի Ռուսացական ընդհանուր ա-
ռաջին ժողովը, որտեղ վճուեց երկրորդ ժողովը գու-
մարել էջմիածնում, եղաւ հայոց դպրոցական պատու-
թեան վերջին հանդէսը: Հազու 3 տարի անցած, 1885-
ին, իշխան Գօնդուկով-Վօրսակովը, ինչպէս յիշեցի իմ
առաջին նամակում, անխնայ կերպով — իհարկէ յանուն
„ռուսացման“ — փակել տուեց այդ դպրոցները, նրանց
արդիւնաւոր գործունէութիւնը քաղաքական ինտրիգի
նոր ասպարէզ դարձնելով: Եւ այդ օրւանից ահա վերջ-
նական կերպով հրապարակի վրայ դրեց այն դժբախտ
և անօթալի հարցը, որ ամբողջ Ռուսաստանում և
մանաւանդ կառավարչական գաղտնի գրագրութիւնների
մէջ յայտնի է „հայոց դպրոցների հարց“ անունով...

Դպրոցների առաջին փակումը 1885 թւին տե-
ղի ունեցաւ այնպիսի տգեղ պայմանների մէջ, որ պա-
տիւ չի կարող բերել ոչ միայն ռուսաց կառավարու-
թեան, որ սիրում է պարծենալ օր է ն քն երի բազ-
մահատոր ժողովածուններով այլ նոյնիսկ այնպիսի բա-
շիբօզուկ կառավարութիւնների, ինչպէս են օրի-
նակ թիւրքաց և պարսից կառավարութիւնները, որոնց
օրէնքը բուն ուժն է, — այն է, կովկասեան կառավար-
չապետը փակել տուեց հայոց դպրոցները այն ժամա-
նակ, երբ էջմիածնի կաթողիկոս Գէորգը մեռած էր,
1884-ի կաթողիկոսական ընտրութիւնը, որ վերջացաւ
Ներսէս վարժապետեանի ընտրութեամբ, չէր հաստատու-
ած և դեռ ևս տեղի չէր ունեցել 85-ի ընտրութիւ-
նը, երբ կաթողիկոս դարձաւ Մակարը: Էջմիածնի հայոց
սինոդը, որին Գօնդուկով-Վօրսակովը, ռուսաց զբա-
րոցների հոգաբարձու Եանօվսկու խորհրդով, նեղն էր
ձգել միմիայն մի բան էր խնդրում — սպասել մինչ
կաթողիկոսի ընտրութիւնը, քանի որ ինքը, նոյնիսկ օ-
րէնքով անձեռնհաս է կարգադրելու այնպիսի մի ար-
տասագոր և կարևոր խնդիր, ինչպիսին է դպրոցների
փակելու կամ յանձնելու հարցը: Մակայն, ինչպէս ե-
րևում է, յանուն „ռուսացման“ բռնութիւն կատարե-
լիս, նոյնիսկ օրէնքի մի այնպիսի բարձրագիր ներկայա-
ցուցիչ, ինչպիսին է կառավարչապետը, կարող է ան-
տես անել մի ապետական երկրի մէջ հասկա-
նալի մի այնպիսի օրինականութիւն, թէ չի կարելի որ և
է տան մէջ՝ առանց տանտիրոջ բուն փոփոխու-
թիւն անել... Ինտրիգների սիրահար Եանօվսկին, ընդ-
հակառակը, ինչպէս երևում է, շատ յարմար էր հա-
մարում հարւածը տալ հէնց այն րոպէին, երբ առան-
տէր չկար, և այդպէս էլ արեց. — հարւածը տուեց,
և այնքան խիստ, որ մի երկու շաբաթուայ մէջ 500
դպրոցների հետքն անգամ չմնաց...

Այս փոքրագուծի լաւ հասկանալու համար՝ թող աւելք ինձ մի քանի խօսքով բնորոշել այդ հերոսին — Եանօփսկուն։ Ի՞նչ է Եանօփսկին։ Ապականած բիւրօկրատիայի տիպական ներկայացուցիչ։ Բիթը բունած քամուն՝ նա հոտոտում է, թէ որ կողմում է ուժը և որտեղ է յղինը՝ ու յպատիւր։ Փոխաբայութեան օրերին, երբ այլ քամիներ էին փչում և մանաւանդ Լորիս-Մելիքովի յղիտատօրութեան՝ ժամանակ, երբ չկային այժմեան յազգայնական՝ հարցերը, Գիրիւ Անարօփէ Եանօփսկին բողոքովն այլ մարդ էր. հայոց դպրոցները պտտած ժամանակ՝ նա մի գլուխ գովում էր և զիմելով աշակերտներին ասում էր. յ՛աւ սովորեցէք մարտնի լեզուն. դա ամէն մի մարդու առաջին պարտականութիւնն է, և մի քիչ ժպտալով աւելացնում էր. յ՛իտէք, ես էլ հայ եմ և ձեզանից աւելի լաւ հայ. տեսէք, ձեր ազգանւան միայն վերջն է յեան՝, մինչդեռ իմ ազգանունս սկսում է յեան՝ ով. . . Բայց այլ հովեր փչեցին, երբ Պօբեզօնօսցեցեան ընթացք տիրեց Ալեքսանդր III-ի թագաւորութեանը, և ահա Եանօփսկին՝ հայոց որ և է դպրոց ժտած ժամանակ՝ արդէն կատաղած գազանի նման մընչում էր. յ՛րա ի՞նչ է. հայոց լեզու, հայաստանի աշխարհագրութիւն, հայոց երգեր. երուսաստանի մէջ միայն մի լեզու կայ՝ ուսաց լեզուն և միայն մի ազգ՝ ուս ազգը. . . Եւ մի օր, երբ մի փոքրիկ երեխայ այն հարցին, թէ յազգով ի՞նչ ես, պատասխանել էր՝ թէ յհայ եմ, — Եանօփսկին՝ մոռացած պատկառանք ուսմօթ, մոռացած, որ երեսայի հետ է խօսում, գոչել է. յ՛աիւր. ես հայոց ազգ. չեմ ճանաչում. ասա սրանից յետոյ՝ թէ ուս ես. . .

Գրականութեան մէջ լաւ աւուրն ստանալու համար՝ դպրոցական գործի այդ անխիղճ դահիճը ազատաձիս յօգուածներ է գրում ամադիրների մէջ պաշտպան հանդիսանալով դաստիարակութեան նորագոյն սիստեմներին, մարտնի լեզուի անհրաժեշտութեան և այն, իսկ իրականութեան մէջ, դժբախտ Աովկասում, այս բողոքը ծայած մի կողմ՝ դրած՝ նա անխղճօրէն հայտնում է մայրենի լեզուն, չի ճանաչում՝ ոչ մի սովորութիւն, մեղքնում է ուսանողի և ուսուցանողի ամենաթոյլ ինքնուրոյնութիւնը, դպրոցական պարսպուճարները վերաբերելով իսկապէս միայն կրօնի, գեղարուութեան և գործնական այգեպանութեան դասերի՝ անարգել առաջ է քշում ամենաթոյլացուցիչ դաստիարակչական մի սիստեմ. լինելով դպրոցները լրտեսներով, նա դարձրել է դպրոցական վարչութիւնը ժամդարմական հիմնարկութեան մի բաժին, — և այդպիսով այսօր հասցրել է կովկասեան ամբողջ քրքանի դպրոցական գործը մի այնպիսի ստիպի անախտ փնջակի, որ սոսկում է ազգում ամէն մի սրինաւոր մտածողի. . .

Ըստ սրաձիս մի նկատուութիւն արեք մի օր իմ՝ մի Եանօփսկին, յեանօփսկին, միացնելով իր ազգանւան մէջ երեք ազգութիւնների ազգանւան վերջաւորութիւնները՝ հայի յեան՝-ը, ուստի յով՝-ը և լեհացու յսկի՝-ն — միացրել և հանձարել կերպով խառնել է իր անձի մէջ այդ երեք ազգութիւնների բոլոր պահասութիւնները, առանց նրանց արժանաւորութիւնների — հայի եսականութիւնը, ուստի չինասիրութիւնը և լեհացու նենգամտութիւնը. . . Եւ ահա այդ զլեւելի յիսանուրդն է, որ քսան տարուց իմէր տակն

ուճրայ է անում մի ամբողջ երկրի կրթութեան գործը և որ այժմ էլ, օգուտ քաղելով Գօթիցիների սայթաք ուղղութիւնից, երկրորդ անգամ աղողեցրեց հայոց դպրոցների փակումը և այս անգամ մի չտեսնուած մօնօջական նորութեամբ՝ կալածների խլումով. . .

Բայց ներեցէք ինձ, այս փոքր շեղումից յետոյ՝ նախ քան դպրոցների երկրորդ փակման մասին խօսելը, պատմել ձեզ, թէ ինչպէս եղաւ նրանց առաջին վերաբացումը. Մակար կաթողիկոսի օրով՝ և ինչ պայմաններու. . .

Դեռ Մակարը պաշտօնապէս չէր հաստատուած կառավարութիւնից, որ տեղեկ շրջաններում գիտէին, թէ նրա կաթողիկոսութեան առաջին գործը կրկնի դպրոցների վերաբացումը։ Ինչպէս յայտնի է, Մակար արքեպիսկոպոսը, 1885-ի ընտրութեան ժամանակ, կառավարչական թեկնածու էր և այդ պատճառով Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեան, որ ձայների առաւելութիւն էր ստացել, մնաց մի կողմ և կաթողիկոս հաստատուեց Մակար, որի անունը ժողովրդի աչքում չի ընկած համակրելի գարննելու համար՝ ուսաց կառավարութիւնը նախօրոք արդէն համաձայնութիւն էր տել վերաբանալ փակած դպրոցները, այն պայմանով միայն, որ դպրոցները այլևս չունենան նախկին ժողովրդական անուրոյնութիւնը, այլ գտնեն հոգեւորական անփշական իշխանութեան տակ։

Այդ իմաստով էլ Մակար կաթողիկոսը առաջարկութիւն արեց, և դպրոցները 1886 թւին վերաբացեցին։ Կար և մի այլ կարևոր խնդիր՝ ուսուցիչների և վարժուհիների ցէնզի (ուսուցչութեան իրաւունք) խնդիր, որի համար Մակարը 6 տարի ժամանակամիջոց խնդրեց, պարտաւորելով մինչ այդ ժամանակի լրանալը հայոց դպրոցների դասատուներին փոխարինել ցէնզական ուրն երոջ։ Ինչպէս երևում է, ծերացած կաթողիկոսը յոյս ունէր, — եթէ այս գարնանքը կարելի է գործածել, — որ ինքը հազու Ե-6 տարի կ'ապրի, իսկ իրանից յետոյ յիշեկուզ ջրհեղ լինի։ Այսպէս էլ եղաւ։ Անց տարին չլրացած՝ այն է 1891-ին՝ Մակարը վախճանեց, և նրա 1892-ին տեղի ունեցաւ Կրիմեանի ընտրութիւնը, իսկ 1893-ին նրա հաստատութիւնը և փառաւոր մուտքը Կովկաս, ամբողջ հայոց հասարակութիւնը համոզած էր, որ նոր կաթողիկոսը, շնորհիւ իր ահաբի ժողովրդականութեան և ունեցած լաւ համբաւի, կարող կը լինի դպրոցական հարցը աւելի հիմնաւոր կերպով կարգադրել և այդպիսով մեղսեղից վերացնել այդ մեծ ողբը. . . Կովկաս 1893 թւին՝ ամառը, երբ նոր կաթողիկոսը չէր հասել Կովկաս, Անգրիսիկոսի համարեա լաւոր կողմնորում հայոց դպրոցների դասատուները մեծ եռանդով աշխատում էին պատրաստել քննութիւն տալ և ցէնզական ձեռք բերել որպէսզի, համաձայն կառավարութեան պայմանագրի, իրաւունք ունենային ուսուցչութիւն անելու ծխական ուսումնարաններում. . .

Մական դեռ այդ ժամանակ նկատելի եղաւ, որ հոգաբարձու Եանօփսկին յարգանքի՝ դիտաւորութիւններ է ստուգանում՝ իր դիմի մէջ, նա ամէն կերպ ծածուկ հրահանգներ էր տալիս կտրել ցէնզի համար քրքանութիւն տալ հայ ուսուցիչներին և վարժուհիներին, և այդ պատճառով Կովկաս շատ լաւ քննութիւն տալու ներք անհասկանալի մերժումն էին ստանում. . . Հե-

տեւանքն այն եղաւ, որ բազմաթիւ պատրաստողները, լաւ տեսնելով, որ կառավարչական դպրոցների վարչութեան կողմից դաւեր են լարուած, թողեցին դպրոցական ասպարէզը և հեռացան ընդմիջտ . . .

Վրայ հասաւ 1894 թւականը: Կառավարութիւնը յայտնեց Էլշիֆանի հովակայետին, թէ Մակար կաթողիկոսին տրւած վեցամեայ ժամանակն անցել է և ուրեմն դպրոցական հարցը պէտք է համարել հերթական: Վեհափառ Խորհրդանքը յաջողութեան շատ քիչ յոյսեր էր տալիս և՛ ոչ մի ելք չգտնելով նա դիմեց Պետերբուրգ, խնդրելով էլի մի տարով յետաձգել պայմանաժամը:

Այս առիթով թոյլ տւեք ինձ յիշատակել հետեւեալ բնորոշ փաստը: Թողովրդական լուսաւորութեան այն ժամանակեայ միտիտոր Գելեանով — ազգով հայ — ստանալով կաթողիկոսից պայմանաժամը մի տարով յետաձգելու խնդիրը, Պետերբուրգում յայտնի մի հայ պաշտօնեայի ասել էր հետեւեալ խօսքերը. «Ձեմ կարող բացատրել թէ ինչու նորին Վեհափառութիւնը մի տարով է յետաձգում խնդիրը. մի այսպիսի կարևոր խնդրի համար՝ պէտք է աւելի երկար յետաձգում խնդրել և իբրև կաթողիկոսական առաջին խնդիրը՝ կառավարութիւնը անկասկած կը յարդէր:» Յիշած հայ պաշտօնեան — ներեցէք ինձ, որ անկարող եմ անունը տալ — գիմում է Թիֆլիզ՝ իմանալու պատճառը: Հէնց այդ ժամանակ 1894-ին, կաթողիկոսը եկել էր Թիֆլիզ, որտեղից պիտի գնար Պետերբուրգ, գիմումն անելու կայսրին, համաձայն Անդրկովկասի հայերի արեայայտած ցանկութեան, օգնելու Թիւրքիայի հայերի դատին. . . Եւ «ա՜հ» երբ ծերունի հայրապետին՝ մտերմաբար հարցնում են, թէ ինչու է մի տարով յետաձգում խնդրել, քանի որ այդ մի տարին այնքան քիչ ժամանակ է, որ նոյնիսկ միտիտորին զարմացրեց, կաթողիկոսը պատասխանել է. «Ինքս ալ չգիտէի, թուղթը ստորագրւեր գացեր էր. երբ իմացայ, թէ մէկ տարի գրած է մէջը. ինքս ալ նեղացայ, բայց ուշ էր. . . »

. . . Դառնանք պատմութեան: — Այսուցին դրագրութիւններ Պետերբուրգի և Էլշիֆանի կամ աւելի լաւ է ասել Եանօպսկու և Պետերբուրգի մէջ որոնք տեւեցին մինչև 1896 թւականը: Եւ «ա՜հ» երբ յաջորդ տարին եկաւ իշխան Գօլիցին և միքանի ամիսներ անցնելուց յետոյ Եանօպսկին յանձին նոր կառավարչապետի պարարտ հող գտաւ վերջին հարածը տալու, — այդ հարածը տրւեց: Հայոց հոգևոր իշխանութիւնը տրամագրութիւն ցոյց տւեց նոր զինուանեց անելու, վերջնապէս պարտաւորեց միմայն կառավարչական ցէնդ ունեցողներին դասատու կարգել, — բայց անօգուտ: Իշխան Գօլիցին փափագ ունէր իրեն անմահացնելու համար անպատճառ մի ուժգին քայլ անելու, և այդ նա արեց: Խճճելով հարցը զանազան քաղաքական ինտրիգներով «հայկական հարցով» և «սեպարատիզմի» (անշատման) ուրականով՝ նա հրամանագրեց փակել հայոց բոլոր ծխական-եկեղեցական դպրոցները, պատուէր տալով զէնքի դիմել որևէ դիմադրութեան դէպքում: Նորից մանուկների արտասուք, սրտաձմիկ տեսարաններ փակած դպրոցներում, նորից յուսահատ ծնողների կսկիծ. . .

Բայց դա միմայն ծաղիկներն են, տեսէք պտուղը —

հայոց դպրոցների կալածքների յափշտակութիւնը, որի նման ապօրինութիւն Վովկասը իր պատմութեան մէջ չի տեսել գուցէ և ոչ մի անգամ. . .

Վերջին նորութիւն: Երեկ վստահելի աղբւրից իմացայ, որ իշխան Գօլիցին մի նոր զեկուցում (դօկլար) է ներկայացրել միտիտորների խորհրդին և առանձնապէս կայսրին՝ դարձեալ կովկասեան հայերի դէմ: Ես կ'աշխատեմ թէ անցեալ տարւայ և թէ այս վերջին զեկուցումները ձեռք բերել և ուղարկել ձեզ՝ ամբողջութեամբ տպագրելու համար: Առայժմ այսքանը միայն շտապում եմ հաղորդել որ իշխան Գօլիցին իմիջի պլոց թոյլտուութիւն է խնդրել Անդրկովկասում գոյութիւն ունեցող հայոց բարեգործական ընկերութիւնները սղմել կամ — ժողովրդական ոճով ասած — խուզել իբրև վտանգաւոր հիմնարկութիւններ: Տարաբախտաբար, ինչպէս երևում է, այդ իրաւունքը նրան տրւելու է, և ուրեմն շուտով՝ երկար տարիներից իվեր գոյութիւն ունեցող օրինական ընկերութիւնները («Վովկասեան հայոց բարեգործական ընկերութիւնը», «Մարդասիրական ընկերութիւնը», «Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը»), որոնք ուրիշ նպատակ չունին, բայց եթէ քաղցածին հաց տալ և աղքատին նպաստ, կ'ենթարկին միանգամայն անարդար ճնշումների: Եկէք ու մի ասացէք, թէ այժմ հայերին արգելում են նոյնիսկ բարեգործութիւն անել. . . Ներկայ դէպքում կրկնակի ջաւալի է այն, որ Գօլիցին իրաւունք է խնդրում հարկաւոր դէպքում այդ ընկերութիւնները փակել — մի իրաւունք, որ, երևի, նոյնպէս նրան կը տրւի և որից Վովկասի այժմեան կառավարչապետը, իհարկէ, շատ շուտով կ'օգտուի իրեն յատուկ «հայահալած» եռանդով. . .

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Լա Հէի Խաղաղութեան խորհրդաժողովին ուշագրութիւնը հրաւիրելու համար հայկական խնդրին վրայ, բազմամարդ հայ միթինգներ տեղի ունեցել են վերջերս Բուլղարիոյ և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու զանազան կէտերու վրայ: Առաջին երկրին մէջ հետեւեալ քաղաքները՝ Վառնա, Սլիվէն, Ռուսչուք, Բարաբոնար, Թ. Բազարձըք, իսկ երկրորդին մէջ՝ Նիւ Եօրք, Ֆրէսնօ, Պրօյիդէնս և Բօստօն:

Ստորև կը հրատարակենք Վառնայի միթինգին որոշումը, որ Խորհրդաժողովին բացման օրն իսկ հեռագրւեր է անոր նախագահին և մասնակցող բոլոր պետութիւններու արտաքին գործոց նախարարներուն: Նոյն բանաձևն ընդունել են նաև Բուլղարիոյ միւս միթինգները: Բուլղարիոյ բոլոր միթինգներն ալ պատիրակ ընտրել են պ. Մինաս Չերազը, իրենց որոշումները Խորհրդաժողովին առջև պաշտպանելու և իհարկէ մասնակի դիմումներով ուժ և մղում տալու համար անոնց:

«Վառնայի հայ բնակչութիւնը 3000 հոյիէ ընդհանրական միթինգ մը գումարելով եկեղեցու բակին մէջ,

1899-ի ապրիլ 23 | 5 մայիսին, յարգանք կը խնդրէ ձեզ՝ ձեր նախագահութեան ներքեւ դռնուց խորհրդաժողովին ուշադրութեան ենթարկել ստորեւ պատճառարանւած իր ձերքը:

Նկատելով որ վերջին քսան տարւան միջոցին, հակառակ ինքրինի 61 յօդուածին որ մեռած պառ կը մնայ, Թիւրքիոյ հայոց վիճակը, բարեխաւելու փոխարէն չէ դադրած վատթարելէ եւ յանգած է խնդրական շարքերու թւականի մը որուն վերջը չի նախատեսւի:

Նկատելով որ սուրբ — ընդհանուր անապահովութեան բնական այդ հետեւանքը — կը շարունակէ աւերել հայ աշխարհը, որ արդէն չարաչար փորձանքներ կրած է:

Նկատելով որ այդ անտանելի կայսրութիւնը կը սկսի հայոց մէջ արթնանալ — նոյն ուժովը կը սկսի ժողովուրդներուն պէս, — ապստամբութեան ուղին որուն յարակից եղած է գրեթէ միշտ ազգերու միջեւ պատերազմ մը:

Նկատելով վերջապէս որ սխտէմատիկ կոտորածներու ապարէզ նշած Հայաստանի արդի վիճակը, ինչպէս նաեւ հայիական խնդրին լուծման յապաղումովը միջազգային խաղաղութեան ապառնացող վտանգը տրամադծապէս ներհակ են այն մարդկայնական նպատակներուն, որոնց հետամուտ է Զինաթափութեան Միջազգային Խորհրդաժողովը:

Այս բոլոր պատճառներով, Վառնայի հայ բնակչութիւնը, որ մասամբ կը բաղկանայ շարքերէն խուսափած փախստականներէ, ընդհանուր միտքիցի մը գումարւած, արտայայտել կը կարծէ բովանդակ հայ ազգին իր ձերքը, հրաւիրելով Խորհրդաժողովին բարեհաճ ուշադրութիւնը Թիւրքիոյ հայերուն կայսրութեան վրայ եւ թախանձելով զինքը մեր երկրին մէջ մշտնջեղ, միջազգային համաձայնութեամբ մը, յարմար եւ ազդեցիկ կերպով գործադրելի միջոցներ հաստատելու համար խաղաղ եւ աշխատասէր բնակչութեան մը կեանքին, գոյքին եւ պատւին ապահովութիւնը):

* * *

Բուլղարական «Նարոզնի Պրավա» թերթէն կ'իմանանք թէ Մակեդոնական Համաժողովը, որ վերջերս գումարւած էր Սօֆիայի մէջ, պաշտօն տւեր է փաստաբան պ. Ռադչիլին երթալ Լա Հէ, անձամբ ներկայացնելու Համար Խորհրդաժողովին մակեդոնացի հայրենասէրներու իր ձերքը:

* * *

Լօզանի Համալսարանին ուսանողութիւնը, խաղաղութեան վեհաժողովին առթիւ, «Բաց նամակ» վերնագրով յայտարարագիր մը հրատարակած է խրկած էր դիւանագէտներուն և մամուլին: Այդ յայտարարագրին մէջ, կրակոտ ուսանողութիւնը կ'ընէ և սրտաշարժ կոչ մը կ'ընէր Եւրօպայի հանրային կարծիքին, մանաւանդ շահախնդիր և անխիղճ դիւանագիտութեան, — որ քաղաքակրթութեանը թշնամանող անտարբերութիւնով մը անկարեկիր մնաց Թիւրքիոյ քրիստոնէաներու անլուր կոտորածին, — որպէսզի օգային խօսքերէն գործի անցնելով տառապող ու մարտիրոս ժողովուրդները փրկագատէ ոճրագործ սուլթանի ձեռքէն: Տեղի սղութեան պատճառով հարկադրւած ենք միայն վերջաբանը գնել հոս:

«Արդ կապենք մեր խօսքը վերջացնելով թէ մարդա-

սիրական և եղբայրական պարտականութիւններու սրբազան զգացումը թող տուաւ մեզի գործածել մարդկային խօսքի ամենէն բացայայտիկ Ֆրազները, բողոքելու համար ձեռն ամէն անոնց դէմ, որոնք հարստահարւած ազգերու չօգնելէ զատ, ձեռք կուտան նոյն իսկ անոնց լուծին պահպանման: Ատոնք են ճշմարիտ բռնակաշները, որովհետեւ գիտեն ըրածնին: Մենք ուրեմն ձեռն անոնց կոչում կ'ընենք, որոնք դեռ չեն մոռցած դժբախտութեան մէջ իրենց եղբայրներուն տալիք յարգանքը և ձեռնուութիւնը:

«Եթէ չէք ուզեր անոնց օգնութեան հասնիլ գոնէ ձգեցէք հարստահարւածները որ ազատօրէն գործեն ինչպէս նաև անոնք որոնք կ'ուզէին անկեղծօրէն օգնել անոնց իրենց լուծը թօթափելու և ազատութիւննին ձեռք ձգելու համար:

«Աւելի ուժգին կերպով կոչ կ'ընենք մանաւանդ այն ժողովուրդներուն զորս դուք կը ներկայացնէք. անոնք որոնք իրենց տունին տէրն են: Որքա՞ն ատեն դեռ պիտի հանդուրժեն այս բռնաւոր «Մեծ մարդասպանին», որ իր պալատին մէջ պահ կը մնայ իբրև մեծագոյն նախատիք մը և խայտառակութիւն մը մեր դարուն համար: Չէ, արդարև մենք չպիտի կորսնցնենք մեր յոյսը. ձեր կարողութիւնը և ձեր գերիշխանութիւնը այն գրանիդէ ժայռն է որուն դէմ ամէն բռնաւոր որ կը զարնէի կը կորուսի, ինչպէս նաև ամէն դիմադարձ կառավարութիւն:

«Արդոնց վերջ մը դնելու համար պէտք է ամէն բանէ առաջ առնական գործ, չէ թէ լոկ խօսքեր զորս քափին Աստուծոյ ալիքներուն վրայէն կը փչէ կը տանի»

Թ Ի Ի Բ Բ Ի Ո Յ Ծ Ո Ի Բ Զ Ը

Միջազգային կայսրութեան մոայլը, խաղաղութեան ծիշը կիրճմուտքին, պարզելու վրայ է, գոնէ աներեւութապէս: Անգլիա, որ գայթակղութեան քարի մը պէս աշխարհի ամէն կողմը ոտքերու կը զարնէր, համաձայնութիւններ կը կնքէ բոլոր մեծ պետութիւններու հետ, միշտ, իհարկէ, իր անուտրական գերագորութիւնը անվթար պահելով:

Սուղանի պատերազմէն ետքը Ափրիկէն, այդ սեւ խափշիկուտին, այլևս քաղաքակրթութեան ծակնթափ անխնայուն տակ ինկաւ: Անգլիա այդ արեւակէզ ցամաքին վրայ ալ ֆրանսայի հետ անուշիկ կապեց իր անհամաձայնութիւնը: Թիւրքիան, որ ապրելու ծանծայրով յանձն կ'ընէր, պարզապէս պետութեանց հակառակորդութիւնէն բնադատուած, Ափրիկէի մէջ ունի չունի վրայ կուտայ: Եգիպտոսէն ետքը, ուր օսմանեան տիրապետութիւնը մօմիաներու կարգը անցած է, Թարապուլուսէն ալ — օսմանեան ծաղիկ երիտասարդութեան խամրոցը — պիտի վնասուի:

Ժայռազոյն արեւելքի մէջ Անգլիոյ եւ Ռուսիոյ սուր պայքարը համաձայնութեան մը յանգած է, Չինու երկաթուղիներուն առթիւ, որոնք առանց արիւնի ակելի ապահով աշխարհակալութիւններ վընեն: Անգլիա յանձն կ'առնէ Չինու մեծ պարտիսպէն վեր երկաթուղի շինցնելը — Չինացիները որքան պէտք ունէին այս պահուն մեծ պարտիսպի մը «կարմիր սատանաներուն» դէմ: Ռուսիա ալ կը խոստանայ Եանկիցի Քեանի գետի հովտին մէջ — Չինու ամէնէն հարուստ եւ կենդանի երակը — Անգլիան շնորհել: Անգլիական անժամապետութիւնը գոհ է: Սաւազուրի հաւատարիմ իր նշանաբանին Sero sed serio (ուշ քայց լըծօրէն) աշխարհի ամէն կէտերու վրայ ապահովեց Անգլիոյ սիկագրական շահերը: Երանի թէ վերջը նաև իր ծախտին վրայի Ծէյքսպիրիան արամս ալ:

«Գողին լէշը» ստանց ընկը հարստ ընկու կրգայ թէ Կիւրիլէրի հսկային նման իր վրայէն ծանծայ պէս մարդեր կ'անցնեն, բայց ոգն ալ չէ, «սմանութեան քաժակը» կըլլած մարդու պէս, իրենց փոխաբերական լեզուով: Երկու մեծ պետութեանց փոխադարձ համաձայնութիւնը աշ-

խորհի սրտին վրայ ծանրցող վախը քիչ մը թեթեւցոյ՝ Բայց դիւանագիտական քարի տրամադրութիւնները աշխարհի մէջ կը ներշնչին շահերու մուսայէն:

Խաղաղականի մէջ ալ Սամայի միջադէպը եւ Ամերիկայի քրտանքները Գերմանիոյ կայսրը ցարազին եւ խառը դիրքի մը մէջ դրին: Բայցերը չկրցան իր «երկաթե ծեւնիկ»-ները զործածել այս պատուոյ կէտին. ինք, որ Աստուծո՛վ զատ մարդէ չէր վախնար, այնքան քծնող ծեւ մը առաւ Ամերիկայի դմադէպ, որ ճիշէ չմտք մը եղգէր մեր դարավերջի դիւցազներգութիւնը թերսրդի դերը պիտի տար Գերմանիոյ ա մէջ ա-յա յ ա ղ թ բնականին:

Ինչքան ալ միջազգային յարաբերութիւնները լաւագուշակ որեւան, ինչքան ալ վազէ՛վազ աշխարհակալութիւնները իրենց քայլերը կամացցնեն, պէտք է նպատել զամենք դիւանագիտա-կան ուղղորտը ուղիին մէջ, քրտանքին ժողովելու համար պարզ դադար մը:

* *

Աշխարհակալութեանց տարտամ եւ հապճեպ սանձամա-զմունքները միջոցին, Բուսիոյ ցարին առաջարկած «իրական եւ տեւական» խաղաղութեան համաժողովը պիտի գումարու: Խաղա-ղութեան հրաւերը ընդունեցաւ «Բեզէ» առաջակներով. միշտեւ իսկ մտնելները դուրս թրան «Վրէժ» շնչելով:

Մակայն երբ քաղաքակերթ աշխարհը շլացած էր երիտասարդ կայսրի մարդասիրական իռէալէն «պատերազմի դէմ» պատե-րազմ՝ յայտարարելով, միւս կողմէն Բուսիան ամողոր ծնողով մը կը մարէր հիւսիսային Յորդանիան վրայ փակելուն միջամադ-ձոտ հիւսիսայգը, Փիլիպինան, իւսարուսին մէջ խաչելութեան քարոզը աւելի անազգեցիկ ցնելու համար:

Միջազգային խաղաղութեան համաժողովին Թիւրքիան ալ պիտի մամակցի. ինչ դառն հնգնութիւն: Բայց չամիդ, կը մամակցի պայմանով, որ պետութեանց լիազօրութիւն տրի իրենց նպատակները ուզածուն պէս խողտողելու: Արդէն իր պատգամաւորին հրամայել է որ համաժողովին մէջ քաջար-ձակապէս դիմարէ երբ արեւելեան հարցի կամ ազգայնական ինդիք ծագի:

ԾԹԵ Ժողովը միայն սուլթաններէ բաղկացած ըլլար, ար-դարութեան գիտակցութիւնը մազ չէր շնորք իր տեղէն: Սուլ-թանը քսան տարւան շարութիւններուն ու սրիկայութիւններուն մէջ, այդքան փրճատութիւնն ալ իմանալու էր: Ի՞՞ծբախտ ազ-գերը իրաւունց ունին զօրով լսելի ընել իրենց ծայքը. ապա թէ ոչ խաղաղութիւնը ցնոր է: Եւ թէ այդ խաչագործներու ժողովը շուր ծամած պիտի ըլլայ միայն:

Լա չէի մէջ, համաշխարհային խաղաղութեան պատգամա-ւորները աչքէ չպիտի փակցնեն անշուշտ արծառը Մաքսոզայի մծ փեխտփային, որ կըսէր «խաղաղութիւնը պատերազմի բարքակցութեան մէջ էր կայտարար, այլ միութեան եւ համաձայ-նութեան մէջ»: «Ամէնէն մծ ուժը ամէնէն մծ ազատութիւնն է»: Այժմէն ար կայ թէ գերմանական պատգամաւորները պա-տերազմի թեր պիտի խօսին. հաւատարմով որ պատերազմը մարդկային յետադիմութեան էր հօտ խնամն է: Գերմանա-քիկ կը վախճան որ իրենց փողովորուն ստալակաւորները կը ծանգոտին, կըր իրաւունքը ուժէն սուաշ մնցի:

Հասկնորէն ժողովին քաջունը կատարէ Հոլանդայի գեղմտի Թալուրին, պայքարական արդարութեան դիցուհի մը վերա-մարտ տալով համաշխարհային Արիսպագոսին: Ապի չայ թէ թիւրը Թագուին «գիտութեան իմծորդ» կը նտես այդ ուխ-պիական համաժողովին մէջ, քայց կը վախճանք որ բնապե-տական Բուսիան Լեթմանովի դեւին համարչը ապ խաղաղու-թեան սրբանուը դիցուհին...

* *

ՄԱԿԵՒՕՒՄԻԱ. — Գարնան Մակեդոնիոյ մէջ շարժման մը նա-խատեսութիւնը չիրականացաւ:

Վալիսերը կը կուտարն թէ երկրին մէջ ամէն բան իւս-դառ է շնորհի մեջ. սուլթանին Որովնտեւ առանց սուլթանի հրամանի աշխարհի մէջ ծանծ մը չի տար: Երբ Թիւրքիան «ճննաց զքրին» մէջէն վերնայ, Թիւրք լրագիրները շէն սրտով մը պիտի շուպեն գրել «Յորդի վեր. սուլթանին Թիւրքիան կործանեցաւ, Աստուծ մէկ օրը հազար ցնէ»: Իսթաւիլը պիտի քոցենք օսմանեան գրաւմունքեան կուսակալ շողորով Բուսիա Մակեդոնիան գործըք ըրած է Թիւրքիոյ դէմ Երբ սուլթանը քի՞ծ ցնէ, Բուսիա պրեւելիք արքայութեանեքու պաշտ-պանութեան» արտակ էր քրնէ:

Բայց Թիւրքիան իր քրնի պետութեամբ, ապագայի տեսուք նախազգացումով կը մնայ միշտ այն անուղղայ յրէշն, որ ժո-գովորու կառավարելու տարրական սկզբունքն պիտի շարժայ ընթանք:

Մակեդոնիոյ շարժման վախին պնշել հաշտարար ու խո-հեմ ընթացք մը քոնելու տեղ, սատեւուը աչքը առած մարդու մէջ պէս, Բուսի ունամ է նոր ստորքերուն հետ զաւիթներն ալ պատանջել, հաւածել եւայն: Ի՞՞ծգոհութիւնը օրէօր աւելի կ'աճի: Բուսիոյ դեսպանը, սլաններու եղած այդ անիրաւութեան դէմ պիտի մը բողբոք է. բայց չամիդ, հնգնութիւն պատաս-խաներ է «նիշէվօ», այն խորհրդաւոր ոչ շէն շք որուն մէջ Պիզ-մարք կը տեսնէր Բուսիոյ զարնուքի ռժիս արմատները: Բայց պէտք է խարիւր Բուսիա եւ սուլթան. օրը երկու հեղ իրար կ'առտն ու կը սիրեն:

Վոսթորի լեթեական ակերուն վրայ, կ'երեւի «չարութեան ծաղիկը» մոոցնել կուտայ սուլթաններու ու սիրաբիտ վիշք-լաններուն թէ կառավարութիւն մը անքարայրականութեան մարդ-նացուտ մը ըլլալու չէ. եւ թէ այն արեւնւայ դաշնիք որ բոցեղէն սուրի մը պէս կը պաշտպանէ «թշանկութեան դու-րդ» — ուրիշ կեաւորին բողբոքի ծայքը պէտք չէ ներս մտնէ — կարող է օսմանեան հոտած կշտն դանաւ, այնքան անսպասելի եւ շէշապի կերպով, որ Երըտըի կախարչներն ալ շնն կընար նախատեսել ոչ երկինքի աստղերուն, ոչ ալ երկրի շրեքուն մէջ:

Մակեդոնիոյ գերագոյն կօմիտէն խաղաղութեան համաժո-ղովին պիտի խրկէ յիշատակագիր մը: Պերկին դաւաճման յօշ-լամներէն եւ զճնշելեցութեան վիժումէն քաջը, պէտք է լսելի ընել այն սրտապնդող վոէժնուրի ծայքը, որ խաղաղութիւն կը բերէ ետեւէն:

* *

ԿՐԵՏԷ. — Կրէտէն ազատելէն իվը Եօրկիսի-իշխանը, Նորքու-ծայի շերմունանը հաւատքով առաջ տարաւ կղզիին խաղաղացման գործը: Սուլթանը ամէն Մեդիկ բանեցուց միւսկումները դժգոհ պահելու համար: Արդէն հրաման ալ գացած է որ Ասիա զաղթն քրիստոնեայ կտորավարչի մը իշխանութեան տակ շնալու համար:

Հոտն դեսպանակոցնուրը վաւերացուց Կրէտէի սահմա-նադրութիւնը, բայց իշխանին յաշորը մը ընտրելու ժողովին իրաւունքի յօշուածը շնջն:

Իշխանը որ ինք ծորտ, սուլթանին այցի պիտի գնար, յե-տաձգած է իր ծնողապի ուխտագնացութիւնը, քանի որ Հա-միդ դեռ խոտվարար գործակալի դերը կը կատարէ:

Համիդ այգպէս կը փրէէ իր կայսրութիւնը...

* *

ԱՐԱՐԱՆ. — Երջանիկ Արաբիան Նորէն ապստամբած է. Թիւրք վաշտ մը, ապստամբներէ շարորուելով Սանա Նահանջեր է:

Համիդ այս պահուս համախալութեան մծ ծրագրով կըզ-բաղի կըսն, Ովկիանիայէն միշտեւ Ափրիկէի ծայքը: Եթէ ա-պագային մարգարէին գերեզմանը խնն, աշխարհի միւսիշխան-ները պիտի դիմն Գուիս «թորագործ կաւիթայի» թիւրպէնն ունանի, անոր ծանտակտի գ եր թ գ մ ա ն ի ն վրայ քօլէրա ցա-նելու համար...

* *

ՍՈՂ ԵՆ ԿՐՕՍԱՓՈՒՄՈՒԹԻՒՆ. — Վանի կրծմակեւութեան տուր մծ յուրով պատմութեան է հպիւրուն մէջ:

Երօզայի մարդասիրութեան անուանը հաւաքած դրամները հաւատորոտութեան եւ խիղճըրու շնուտական վաճառականութեան կը ծառայեան: Թո՛ւ... Կաթօլիկները անոնց միայն կ'օգնեն, որքոր ս. Գիտորսի գովը մանկը աչք կ'առնին: Անուշեքան Ազարմանը, — կը կուտասայ մէկ կտորով եւ, մէկայն մեղք քերել Հայաստանի, եթէ ոտքով գլխով պապականութեան ըլլար: Ընդհակառակը գլխմանական «Գեօշիշէ Ծայթունկ» լրագիրը սրտաշարժ կը մը կ'ընէ բողբոջանա միսիթալութեան, որ հա-կրուն նկատմանը մարդասիրական մարդը սարմաւնէն դուիս նկնելով, կաթօլիկներուն պէս «կըզի առուծակով» չըբաղին:

Պապականներու մոլեգին եւ աներկ պրօպագանդան առջեւ Թրմանեան իր անպարագրելի մարմինն հետ քսակը հասցնելը կը Նայի: Իր այն հատած օրը կը կարծէր թէ անոր ուռեցք մարմինը յո՞ն է ապագայով, այնպէս կ'ընցուց թէ թիւթիթ քաղաքականութիւնով մը սուլթանը մատն մը լրայ պիտի խաղ-թնէ. անկէց իվեր Համիդի ոսկի սի ղ տ ք գրաւելու համար գործեց ստոյնութիւններ, գնդապի դաւաճմանութիւններ — մոռա-նալով թէ չիք միշ ծանուկ որ ոչ յայտնեցի — որմնք իր սար-դոնեան ծիծաղին տակէն իսկ փուշ փուշ դուրս կը ցըլնու: Բուրք գործերը փուս դերձանով շուլթան անգարարութիւններն ին ներքեւի գալին վրայ փուսած փառաւոր լէջ մը...

Հարմանակ բան, այն պահուս, երբ գաւառները կրօ-նական քոնեկարի սանձարձակ դաշտ կ'առնէ, Գիւրի հանդը նայ վարդապետները տեղեւնէն շնն մպակտել, վարկալով ոչ հաւելիթնն կը պաղի Չմնք ուզեր մտքերնէս վար անցնել թէ

Համէտի պէս քաշող մազնէտնի կան այլ կուսակրօններուն քով, բայց հետաքրքիր էր իմանալ թէ ր որւան համար գէրը դրած են այլ սագեր: Այդքան ծուլութիւն ոչ մէկ եկեղեցակամութեան մէջ տեսնուած է: Գոնէ, աչքեքնուն առջէն, օրինակ առնէին օտար քարոզիչներէն, որոնք ծով ու ցամաք պատուով աշխարհը նեղ կը գտնեն իրենց հաւատքը քարոզելու համար: Մեր կղերները Պօլսի մէջ շուրջ կ'արծին մնայն. ոչ համագնացի մեծութիւնը ունին, ոչ զաղասիքի անձնակազմի շնորհքը հետաշխարհիկ միջոցառութիւնը մասն առնած, հազարօտար վայրնիները կ'երթայ կը քաղաքակրթէ, մեր փ ա փ կ'աւտուր հայրաւորները ու սրբազանները, քի՞տնուն տակ իրենց եղբայրներուն երկու չոր խօսքով պատիկ մեծիարութիւն մը ընծայելու զգնաքերութիւնը անգամ չեն հաճիր յանձն առնել: Ամբողջ ոչնչութեան գանկեր են: Եթէ մնամէջ Օրմիւնեանը արմատակամներն ալ իր հրեշտակային պատկերին համեմատ ստեղծեց՝ ալ քար մը առնէր ծովը երթանք:

Պատրիարքարանի թուլանհոգ եւ սպիկար վարչութիւնէն խրախուսած, օտարները օրօրի կը գոտիւնդէին յարձակողական դիրքերնին աւելի ամրոցներով:

Վերջերս Մեր սուրբ հարց վաւաստութիւնը՝ անուն զբոլորի մը աշխարհը եկաւ. մարդեղութիւնը՝ հայոց Հարոզերէն իվեր կաթօլիկութեան մեջ ստուգաչորող ձգտումն, եւ դժպիտակաւ խաչակրութիւն մը հայ եկեղեցիին դէմ:

Հեղինակը հոռուտաւան երկը սկզբնատառով վարդապետ մըն է, միայն թէ «արամիտ-հայրնասէր» վարդապետը գրքին կողքին վրայ իբր վերտառութիւն մտցնել է աւելցնել Ազարեանի հաւատարմին կտորը թէ «կաթօլիկութիւնը յեղափոխութեան դէմ թուրք մըն է»:

Երբեք այդ սպուռ-ու զոնհիկ մտքի թափփփուրը չենք նկատեց խելա անքա (երամաւէտ մեղք) մը հայ կաթօլիկ կղերն դատաստանաչափ մը ընելու, ոչ ալ անոր արժանիքը նսեմացնելու համար:

Գրքիկը կարդացողը պէտք է նախ սառն շղեր ունենայ եւ քաջ պիտո՞՞՞՞՞ պարզան փիւ փխտուց մը մարտելու համար: Աւշուրնէն ընթերցողին ոտքերը գետնէն կը կարկին, երբ կը տիպէ սրբապիղծ ու անձոնի յիմարաքանութիւններով խճճած այդ քանի մը էջերը, որոնց՝ դար մը առաջ իսկ պետի Հեքիէնց տեսաշխարհ զարուն, արզանդին մէջ իսկ ինդրամաս ընելով գայն: Ամբողջ հայ ազգը իջու տեղ դնել...:

Հառատուն հազար պատառ կ'ըլլայ փաստաքաններու համար թէ մեր հին հայրապետները լատինաւան եւ լատինաւան էին. մոռ մտացեր-բերնէն փախցնելու թէ Օրմիւնեան ալ հոռուտաւան եղած է:

Այդ պնդան ու սիրտխառնուր զուածին մէջ շեղի շափ խելք չես՝ տեսներ. հեղինակը չի ստեր երբ ըսէ. «մարդ եմ եւ ոչինչ կայ մարդկային. այսպիսութիւններէն ոչ ինձի օտար ըլլայ»: Ծծկան երկխայ մը անգամ պետի շտորագրէր-այդ խելքա եւ լրբժուկ մտքի գտնանցանքներուն. տակ: Զե՛՛՛ մը աղելու է այդ արեղան որ չհոտի:

Ոչ որ աւելի բնօրոտեցնող է, այլ կովզուի վարդապետին ամբողջ հայրութեան եւ հայ մատուլին վրայ արգահատակից խոջացում մը ունենալն է. անոնց «տգիտութեան» ու «կուրուցեան» առջև «գնութեան աչօք» կը նշի. ծիծաղելի է մտնաւանդ որ իր գրքովով մեզ «տեսաւորելու» տիկնոջ փառասիրութիւնն ալ ունի. կարծես բերաննիս դեռ կաթ-կը հոտի: Մէկ խօսքով այդ «հողմոց» զուածը տգէտ եւ յաւակտոտ ուղեղի մը հայելին է, որուն մէջ պուտ մը արուն չես գտնիր: Ս. Պետրոսի քանալին արքայութեան դնեքը կը բանայ, բայց ասոցիակամն մէջ մարդոց խիղճերը եւ հեղինակ վարդապետին խելապատակը կղպելու շարութիւնը ունի, տիպա: Եթէ այդ ողորմելի վարդապետը թօրգուէմատայի օրով սաղէր՝ շեք հաւատացնելէ մը կ'ըլլար:

Գլխուն զօր կուտայ Պետրոսի զխաւորութիւնը, հետեւապէս պատկին գեղեղխախտութիւնը եւ անխալութիւնը հաստատելու համար: Ո՞վ զիտէ, թերեւս Էրիստոս Պետրոսի զոքանչին աղուրիկ աչքերուն համար խտրութիւն մը ըրած ըլլայ: ԶԸԼԱՍՆՈՒՆԸ քան չէ:

Եթէ երբեք հայերը ատենով չունին առաջնութիւնը ծանչցեր եւ այսօր քանի տեղ չեն դնել, ու իրենց գիրքնը հաւասար կը նկատեն անոր, պէտք է հիմնաւ այդ ազգին վրայ, որ շատ մը այսօրան քաղաքակրթ ազգերէ անաւ կրօնական ազատագրութեան պէտքը զգացնի ու զուխ հանել է իր փորքիկ շրտու ուժով: Ոչնչի վրիկտը վերադարձ մը տրէն դէպք կրօնական քանապետութեան տրծը. «յախոննական քաղաքը» չի շլացնի մեզ: Մեր անհատապաշտ նկարագիրը կ'ընդգծի այդ զարգացման դէմ. կը մոռնան որ ժամանակակից եկեղեցական մը «հաշանց թուրթը» «դա շանց թուրթ» է պոռաց, անքեակի հեղինակութիւնը ոտնամուկ ընելով պրավժ...:

Եթէ կաթօլիկութիւնը մեզ պետի ազատէ մեր թշտառութիւնը — ինչպէս միամտօրէն հաւատացնել կ'ուզեն շատեր — Լեհաստանի ազատութիւնը ներք է իրեն: Զգեցէք ամէն մարդ իր եղովը տապիկի եւ ինչպիսեքը հայ լաճերուն օտարտիքի քիստոնէականները:

Ողջ զուխնիս աւետարանին տակ դնել այս դարուն... երբ պատերով, տեսաւորչներով ու ամայի երկինքով զբառնէ անաւջ այնքան կենսական եւ սրտի մօտիկ հարցեր կան... Մենք կը կարծենք թէ ամէն ազնիւ ու թժ շատ զետակից հայ ինչ դաւանանքի ալ պատկանի ատանկ փցուր ու միտին մէջերէ մեշա վեր պէտք է նայի, ազգին ընդհանուր շահը:

Բայց արդարադատ ըլլալու համար պէտք է աւելցնել որ կ'էթ այդ գրքիկէն քանի մը էջ պատկին շուտիկին վրայ փակցէր, իբր խարան, ծերունի քահանայապետը — որուն փոս աչքերը հող կը նային — վերագործողութեան շարձարանները չէր քաշեր: Պատկեր ասա պղպիսի խզուկութիւններով կը շինեն իրենց «հաւատքի ամրոց»-ները, որովհետեւ իրենց թագաւորութիւնը այս աշխարհէն չէ:

Յ. Գ. — Այս տողերը զրւած էին, երբ հեռագիրը հաղորդեց թէ Ազարեան պատրիարքը «ի Տէր հանգեր է»... պատկէն ստալ...

«Հող էր եւ անդրէն ի հող դարձցաւ...»

Եւ ի՞նչ մարդ, կարօտը փորը եւ աչքը բաց մտաւ, կաթօլիկութեան համար քանիս յերմարուս պողեկորիւ շտեմած այն կրկին մէջ, ուր «հեղանին կը ծաղկէ»:

ԹԻՒՐԿ ԿԱԹՈՒԼԻԿՈՒԹԵԱՆ ԳԻՄՈՒՄՆԵՐԸ

ՎԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԲԱՆԱՅԵԼՈՒ

«Գրօշակ»-ի այս տարւան № 2-ի խմբագրականին մէջ Հազորդած էինք արդէն թէ սուլթանի կառավարութիւնը 1898-ին կրկնած էր իր դիմումները Գաշնակցութեան մօտ, առաջարկելով բանակցիլ այս անգամ այն պայմաններու մասին, որոնց համար գոհացում ստանալէ ետք, Գաշնակցութիւնը կը յօժարէր գաղբեցնել յարձակողական բնոյթ ունեցող իբ քօրը ձեռնարկները:

Չնայելով որ թէ մեր և թէ եւրօպական հանրային կարծիքը շահագրգռած էին այդ խնդրով և թէ մինչև իսկ այդ մասին կարգ մը սուտ ու սխալ տեղեկութիւններ սկսան երևան գալ ատենէ մը իվեր եւրօպական մամուլին մէջ, բայց այսօր միայն հնարաւոր կը գտուի այդ խնդրին ամիսի պատմութիւնը դնել մեր ընթերցողներուն առջև, որովհետեւ գեռ վերջերս միայն, այն է մարտ 11-ին, այդ գործը յանդեցաւ անկալած վիճակին, երբ Գաշնակցութիւնը պաշտօնապէս խզած յայտարարեց ամէն յարաբերութիւն իր և թիւրք կառավարութեան պատերազմներուն միջև:

* * *

1896 օգոստոս 14/26-ի կուլնեթէն ետքն էր, որ սուլթան Աբդուլ Համիդ առաջին անգամ խորհեցաւ պատերազմութիւն մը խրկել Գաշնակցութեան մօտ: Պատերազմը Տիրան պէյ Տատեան, Յարութիւն փաշա Տատեանի որդին, 1896 հոկտեմբեր 28-ին ժընեվ եկաւ խնդրել Գաշնակցութեան գաղբեցնել իր յարձակողական ձեռնարկները, հաւաստելով թէ սուլթանը որոշապէս խոստացած էր անյապաղ մոցնել իր երկրին մէջ կարեւոր բարենորոգումներ: Տիրան պէյի ըսելով մինչև ի ն ն ա մ փ ս բարօրութեան նոր թւական մը պիտի բացէր Թիւրքիոյ համար...

„Դրօշակի“ խմբագրութիւնը իր պատւիրակներուն միջոցով պատասխանել տւաւ Տիրան պէյին թէ նախ՝ յեղափոխական շարժումը արտասահման գտնւող քանի մը անհատներու սարքած խաղը չէ, այլ բունակալութեան տակ չեծող ամբողջ ազգի մը յուսահատ վճռակալութեան գործը, և հետեւաբար այդ շարժումն արմատախիլ ընելու միակ ճամբան այդ տանջող ժողովուրդին պահանջները գոհացնելն էր: Բայց ատոր համար ոչ թէ ելլալ ժընէվ գալու էր սին խոստումներ տալու, որոնք 1856-ի Պարիզի դաշնագրէն իվեր 40 տարի է որ անընդհատ կը կրկնուին անպատկառ ստուգութեամբ մը, — այլ անոնց ուղղամիտ իրագործումին ձեռնարկել Հայաստանի և Թիւրքիոյ Հայաբնակ գաւառներուն մէջ: Երկրորդ՝ Դաշնակցութեան ապակեզրօս սիստէմին համաձայն՝ ոչ թէ „Դրօշակ“ ի խմբագրութիւնը, այլ Երկրին կօմիտէները միայն ձեռնհաս են առկախել արդէն վճռած՝ յայտագրին գործադրումը, — բան մը որ բնականաբար պիտի համաձայնին ընել ոչ թէ թիւրք կառավարութեան խոստումներուն անսալով, այլ երբ անոր աւետած մօտալուտ արարքները ղերենք համոզելու հանգամանքն ունենան, թէ արդարեւ այդ կառավարութիւնը անդառնալի կերպով ոտք դրած է արդարութեան ճամբուն վրայ:

Տիրան պէյի մեկնելէն գրեթէ երեք ամիս ետք, 1897 փետրուար 4-ին, ժընէվ եկաւ երկրորդ պատւիրակ մը, պր. Վաղինակ Աճեման, Տիրան պէյի տւած հաւաստիքները կրկնելու: Կացութիւնը փոխւած չէր, ուստի անոր ալ նոյն պատասխանը տրեցաւ ինչ որ իր նախորդին:

Սուլթանը արդէն շատոնց մոռցած ըլլալու էր իր այդ երկու պատւիրակներուն միջոցով տւած հաւաստիքներն ու խոստումները, երբ երկու դէպքեր եկան տակն ու վրայ ընելու Երլտըզը: Խանասօրի արշաւանքը, 1897 օգոստոս 25/6-ին, և անոր գրեթէ անմիջապէս հետեւող, Վ. Պօլսի մէջ իսկ կատարւած նոր կարգի ահեղ գործ մը՝ օսմանեան բանկի օղը հանելու փորձը ու Բ. Դոան պայթիւնը օգոստոս 6/18-ին, անգամ մը ևս մատնանիչ ըրին Երլտըզին հայ յեղափոխական մարմինը բանի տեղ զնելու անհրաժեշտութիւնը:

Երրորդ անգամ ըլլալով պատւիրակ մը ճամբայ հանւեցաւ Վ. Պօլսէն, Յարութիւն փաշայի եղբօրորդին Տըրդատ պէյ, որ 1897 հոկտեմբեր 26-ին հասաւ ժընէվ նախկին առաջարկն ընելու, նախկին հաւաստիքները նորոգելու:

Խմբագրութիւնը կրկնելով նոյն պատասխանը որ տարի մը առաջ արդէն տւած էր Տիրան պէյին, իր զարմանքը յայտնեց որ թիւրք կառավարութիւնը կը համարձակի տակաւին Դաշնակցութեան ինդիքը որ իր գործունէութիւնը կասեցնէ, մինչդեռ ոչ միայն Տիրան պէյին „ինն ամսւան“ մէջ գործադրելի բարենորոգումները մոռցած էին, այլ հայ տարրին դէմ հալածանքը նւազելու փոխարէն՝ օրօրի կը բազմապատկէր:

Խմբագրութեան այս պատասխանն ստանալէն քանի մը շաբաթ ետք՝ Տըրդատ պէյ դարձեալ դիմեց անոր, և ծանրանալով բարենորոգումներու մասին Յարութիւն փաշային սուլթանէն ստացած նոր հաւաստիքներուն կարևորութեանը վրայ, իր կողմէն առաջարկեց անոր չափաւոր բարենորոգումներու ծրագիր մը մշակելու և յանձնել իրեն, որը կը յուսար Յարութիւն փա-

շայի միջոցով ընդունել և գործադրութեան դնել տալ գործով ապացուցանելու համար այդ նոր խոստումներուն լծութիւնը:

Խմբագրութիւնը դիտել տուաւ անոր թէ այդ բարի դիտաւորութիւններուն լրջութեան ապացոյցը կրնար տալ սուլթանը եթէ սկսէր իրագործել հազար անգամ իր խոստացած բարենորոգումները: Եւ հիւսիս հարկ կը մնար յեղափոխական կուսակցութեան մը բնած առաջարկներուն, քանի որ սուլթանն ու Յարութիւն փաշան շատ լաւ գիտնէին հայ ժողովուրդին արդար պահանջները, որ քանի քանի անգամներ ներկայացուած են թիւրք կառավարութեան՝ պատրիարքարանին, դեսպաններու և յեղափոխականներու կողմէն: Եւ վերջապէս Խմբագրութիւնը ոչ մէկ իր աւուրն քունէր որ և է գոհացում տալու այդ կարգի առաջարկի մը, որ Դաշնակցութեան բոլոր կօմիտէներուն ձեռնհասութեանը ենթարկելի գործ մը ըլլալուն, կրնար լուծում մը ստանալ անոնց ընդհանուր համաձայնութեամբը միայն: Բայց անգամ մը ընդմիջտ վերջ դնելու համար Պօլսէն ժընէվ այդ երթևեկներուն, շատ-շատ կրնար միջնորդի դեր կատարել եթէ Յարութիւն փաշան ուղեւոր իր առաջարկը պաշտօնապէս ու գրաւոր ներկայացնել կօմիտէներուն: Իսկ գալով Խմբագրութեան՝ իր կողմէն կը յանձնարարէր միայն արդէն հրատարակւած վաւերագրեր, օրինակ՝ Դաշնակցութեան Ծրագիրը և Վ. Պօլսի կէտք, Կօմիտէի 1896 օգոստոս 14/26 թւականի Յայտարարագիրը:

Այդ պատասխանն ստանալով Տըրդատ պէյ մեկնեցաւ Պօլսի և շատ չանցած Խմբագրութիւնն ստացաւ անոր մէկ նամակը 23 դեկտեմբեր թւականի, ուր յայտնելով թէ յլաւ մը՝ բացատրած է Յարութիւն փաշային Դաշնակցութեան „կազմակերպութիւնն ու նպատակները“, ներփակ կը խրկէր Յարութիւն փաշայի կողմէն իրեն ուղղւած, բայց Դաշնակցութեան հասցնելու յատկացուած նամակ մը, որուն ահա էական մասը:

Sublime Porte
Ministère des Affaires Etrangères. 28 դեկտ. (հայոց) 1897
Cabinet du Sous-Secrétaire d'Etat.

Սիրելի եղբորորդի Տըրդատ պէյ,

Այս անգամ ՚ի ժընէվ, իմ կողմանէս Դրոշակեանց հետ ըրած տեսութիւններդ և նոյնա ըրած առաջարկներն քեզմէ լաւ մը հասկցայ, ինչպէս որ գիտես արդէն ազգային կեդրոնական Վարչութեան հետ խորհրդակցելով մի քանի բարեկարգութեան առաջարկութիւններ ըրինք ուր որ անկ է և յոյս մեծ ունիմ սր հետդնտէ վեհապետ Կայսեր իրատէսերը պիտի ստանամք և մէկ քանի կէտերուն իսկոյն գործադրութիւնը կատարուին:

Ինչ միջոցաւդ Դրոշակեանց առաջարկութիւնները ընդունած և պետք եղած տողը ըստ պատշաճի խօսած ըլլալով որոշած եմ իրենց մօտ անմիջապէս մէկը խրկել, որով թէ իրենց ազգիս վերաբերեալ առաջարկներն ու տեղեկութիւնները գրաւոր ընդունի և թէ իմ տալիք պատասխաններս գրաւոր յայտնէ և այսպէս կարծեաց փոխանակութիւնը կատարուելով հայ ազգիս սրբազան շահերը վերապահելու ամեն ոք իւր ջանքը չի զլանայ:

Ամեն ազգային պարտաւորութիւն եղածին պէս իմ ալ մինչեւ ջարդ ՚ի նպատ սիրելի ազգիս տուած աշխատութեանցս արդիւնքը Աստուծով քիչ օրէն

յայտնի պիտի ըլլան գործադրութեամբ նորա բարե-
լաւութեանն պէտք եղած միջոցներովը, եւ որով քա-
չուած նեղութիւններն հետզհետէ պիտի անհետանան:
Յիշեալ կէտերը մեր վեհափառ Խնքնակալին հա-
մարձակօրէն խնդրած եւ նոցա գործադրութեանը
մասին խոստում առած ըլլալով գոցա իրատէն եւ
լածին պէս ամէն մէկը մանրամասնօրէն պիտի բա-
ցատրել տամ քօմիթէին:

Մաս՝ բարեացակամ Տօրեղայրդ

(Ստորագրած) ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ

Դաշնակցութեան կողմէն «գրաւոր առաջարկներ» առ-
նելու համար այդ դիմումը անտեղի էր այն բոլոր մե-
կին ու որոշ յայտարարութիւններէն ետք որ Խմբագրու-
թիւնն այլ և այլ անգամներ ըրած էր երեք պատ-
ւիրակներուն ալ: Բայց քանի որ պաշտօնական, գրաւոր
առաջարկ մը կը ստանար Դաշնակցութեան անունին՝ Խմբ-
ագրութիւնը փութաց անոր պատճէնն ու Տրդատ պէյի
հետ ունեցած իր բացատրութիւններուն ամփոփումը
Դաշնակցութեան ֆոնտէններուն նկատառութեանը ներ-
կայացնել 14 յունւար. 1898 իր շրջաբերականովը:

Միւս կողմէն Խմբագրութիւնը խորհելով թէ այն պա-
րագային՝ երբ Դաշնակցութիւնը համաձայնէր գրաւոր
առաջարկներ ղնել թիւրք կառավարութեան, պիտի փա-
փագէր այդ քայլն ընել յեղափոխական միւս կուսակ-
ցութիւններու և ձեռնհաս անձերու հետ համախոր-
հուրդ, 20 փետրւար 1898 նամակով մը դիմեց Յա-
րութիւն փաշային, խնդրելով իմացնել թէ կրնա՞ր
ինքը արտօնել Դաշնակցութիւնը յայտնել վերեւ
յիշած մարմիններուն և անձերուն՝ թէ սուլթանի այդ
դիմումները անոր Յարութիւն փաշային միջոցով կա-
տարած են, և թէ Դաշնակցութիւնը գրաւոր հաւաս-
տիքն ստացած է անկէ այդ դիմումներուն առթիւ *):

Իր այդ նամակին պատասխանը Խմբագրութիւնն ըս-
տացաւ մարտ 12-ին միան, Տրդատ պէյի միջոցով, որ
երկու օր առաջ հասած էր Պօլսէն, Յարութիւն փա-
շային առաջին գրութեան մէջ յիշատակած պաշտօնը
վարելու Դաշնակցութեան մօտ:

Ահա այդ պատասխանին կարևոր կէտերը.

Sublime Porte

16 | 28 փետր. 1898

Ministère des Affaires Etrangères.
Cabinet du Sous-Secrétaire d'Etat.

Սիրելի եմ Տրդատ պէյ,

Արժ մեր Դրօշակեան ազգայինք բնականապէս
կրնան հաղորդել ուր որ անկէ է թէ ես յիշեալ եր-
կու կէտերուն համեմատ կը յայտնեմ որ դիմում-
ներն իմ միջոցաւ եղած են եւ թէ սուրած ապա-
հովութիւնքս լրջութենէ դերձ չ'են:

Թիշելով ապա քանի մը իրատէներ, որոնց կարեւորները մննչեւ
այսօր դեռ կը պայտն իրնց գործադրումն, Յարութիւն փա-
շան կը յարէ:

Այժմ այս՝ կողմներն անմիջապէս հաղորդէ՝ մեր
հայրենակցաց եւ միանդամայն ինչպէս որ արդէն
ըսած եմ, անտուրմէ մասնաւոր կերպով խնդրէ՝ որ-
պէսզի իրենք ալ Անատոլի մէջ բնակող ձիւղեր-
նուն եւ թղթակիցներուն խրատեն որ գործադրու-
թեանց վրայ տեղեկութիւն տան ժընէլի քօմի-

*) Ընդհանուր ժողովը թիւրք կառավարութեան առաջարկ
մերժելուն, այդ մտադրութիւնն ալ մասց չ'իրագործուած:

թէյին թէ յիշեալ իրատէներն կը գործադրուին թէ
ո՞չ, այնպէս որ քօմիթէն ալ անմիջապէս սոյն տե-
ղեկութիւններն քեզ հաղորդէ եւ դու ալ ինձ իմաց
տաս պէտք եղած եղբակացութիւններն ձեռք բե-
րելու համար: Բնական է որ այսուհետեւ ալ ստա-
նալիք իրատէները հարկաւ պիտի հաղորդեմ ՚ի տեղե-
կութիւն քօմիթէյին եւ ՚ի բանակցութիւն:

Մաս՝ միշտ բարեացակամ՝ Տօրեղայրդ

(Ստորագրած) ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ

Խմբագրութիւնն իր պատւիրակներուն միջոցով ան-
միջապէս յայտնել տուաւ Տրդատ պէյին, թէ աւելորդ
և անտեղի կը նկատէ անոր վերադարձը, քանի որ Դաշ-
նակցութեան պատասխանը տակաւին իրեն՝ Խմբագրու-
թեան ծանօթ չըլլալուն, ինքը չէր կրնար ձանձնալ
անոր այդ նոր պաշտօնը և պաշտօնական յարաբերու-
թեան մտնել անոր հետ:

Տրդատ պէյ արդարացի գտնելով Խմբագրութեան
այդ դիտողութիւնը, պատասխանեց թէ ինքը կը սպասէր
ուրեմն Դաշնակցութեան պատասխանին, իսկ մինչև
անոր ստացիլը անպաշտօն կերպով գիտակ կը պահէր
Խմբագրութիւնը հետզհետէ ստացելիք «շնորհներուն»
և կատարելիք բարենորոգումներուն:

Եւ արդարև Տրդատ պէյ ութ ամսէն աւելի մնաց
Ժընէվ, Խմբագրութեան անդադար հաղորդելով Յա-
րութիւն փաշային իր ստացած բազմաթիւ նամակնե-
րուն պատճէնները, ուր խոստումներն ու հաւաստիք-
ները կը վխտան միշտ և ուր իբրև կարևոր «շնորհներ»
կը ծանուցէին Ազգային հիւանդանոցին օրական նպաստ
տրած հացն ու միսին քանակութեան քանի մը օխա
աւելցելիք, 25 հայ երիտասարդներու պետական վար-
ժարաններ ընդունելիք և նման բաներ, աւելորդ է ըսել
թէ մեր հասկցած բարենորոգումներու ձայնն ու ձունը
չկայ հօն:

Մինչ այս մինչ այն՝ Դաշնակցութեան բոլոր կօմի-
տէներն ալ միաձայն կարծիք յայտնեցին՝ կարևորու-
թեանէ զուրկ համարելով նկատառութեան չառնել Յա-
րութիւն փաշա Տատեանի միջոցով սուլթանին ըրած
այդ դիմումը Դաշնակցութեան մօտ և, որովհետև քիչ
օրէն՝ ապրիլի երկրորդ կէսին, պիտի գումարէր Դաշ-
նակցութեան Ընդհանուր Ժողովը, այդ որոշումը նե-
թարկել անոր վաւերացումին:

(Շարունակելի)

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Ամերիկեան «Eagle», «Tribune» և «Telegram»
թերթերում վերջերս լոյս տեսան մի շարք նպաստա-
ւոր յօդուածներ հայկական շարժումի մասին: Բացի այն
յօդուածներից, որոնք տպագրւեցին վերոյիշեալ լրա-
գրերում, գոցանից «Eagle» և «Tribune»-ը իրենց
խմբագրականներում սաստիկ յարձակում են սուլթանի
և նրա կառավարութեան վրայ, իսկ «Telegram»-ը
մի առանձին ցատումով նոյն իսկ աւելացնում է.

«Եթէ հայերը սուլթանի բռնապետական լուծը
խաղաղօրէն եւ լուռ տանէին, այդ պիտի ցոյց տար
միայն, որ նրանց չափ ստոր ոչ մի ուրիշ ազգ չկայ
աշխարհումս...»

Պ Ա Տ Ի Ի Ը

(ՊՄԱՐԱԳՅՑ ՄԻՋՅՈՅՆ ՅՈՒՇԱՍՏԱՆՆԻ)

Պարիզի «Journal du Peuple» իր ապրիլ 8-ի համարին մէջ արտասպելով Գաշնակցութեան վերջին Յայտարարագիրը վեց մեծ պետութիւններուն, հետեւեալ խորհրդածութիւնը կը կցէ անոր.

«Սամանեան խօրհուստեան զոհերը եթէ կը սպասեն, որ պետութիւններու բարեհաճութիւնը արտայայտուի ինպատ իրենց՝ երկաթ պիտի սպասեն նթէ կ'ուզեն հարստահարութիւնէ ազատուի, իրենք իրենց թող դործեն»:

Իտալական «Avanti» լրագիրն ալ իր 16 ապրիլի համարին մէջ «ցաւառիս պատրանք մը» կ'անուանէ հայկականին պէս «արգար և մարգարական խնդրի մը» լուծումը եւրոպական դիւանագիտութենէն ազնուկալելը:

«Իրոշակ»-ի № 2-ում «Թիւրքիոյ շուրջը» բաժնի մէջ մենք ծանօթացրինք ընթերցողին գերմանացի պատար նաուամանի կարծիքների հետ հայերի մասին: Այս անգամ բերում ենք այստեղ նոյնպէս գերմանացի և նոյնպէս պատար Brokes-ի կարծիքը նոյն խնդրի առթիւ:

Ձանազանութիւնը այդ երկու պատարների մէջ այն է, որ նաուամանը սուլթանասէր Աիլհէյմի հետ էր ձանազարհարում Թիւրքիայում՝ նրա համար աղօթելու պաշտօնով և իր ծանօթութիւնը հայերի մասին առել էր Պոլսում ապրող մի ինչ որ գերմանացի բրուսից, իսկ Brokes հայ սովետներին օրնելու նպատակով էր Թիւրքիա գնացել, Աիլհէյմի խորքերը մտել ու անձամբ տեսել ծանօթացել ժողովուրդին:

Մեզ մօտ եկան այգիւններ, որոնցից մի քանիսը մանակցել էին երեք տարի առաջ ևղած աւարտարութեան Լայարտ, առանց դուրսնելը կորացնելու: Ներս մտան նրանք և նստան լիկ. խայտաճամուկ և ոսկէնու զգեստներ ունէին նրանք հագին, ատրճանակներ ու դաշոյններ գօտիներին կապած... Քիչ յետոյ միայն նրանք հարգրին ինձ, չի՛ կարելի արդեօք, որ զէջթուցիք դաշակից դաւնան Գերմանիային, որպէսզի այդ կիրպ ապահովութիւն գտնեն... Ապա եկան ուրիշները, որոնք ծախել էին ուղում Ձէյթունի բնորոշ զէնքեր ու զարդեր: Պատար Լօմանը խնդրել էր ինձ գնել նրանցից: Իմ ասելու տեսնում էի խոշոր, յաղթանաւամ մարդիկ, մեծ բեխերով և ատրճանակների, սրերի ու հրապանների մի կողով: Մէկը նրանցից, որը առանձնապէս նշանաւոր էր դարձել պատերազմի մէջ, յանկարծակի իր յիշողութիւններով դրաււած՝ նիւաեց վերելի զգեստը և հագնւելով, ինչպէս կուի ժամանակ սկսեց մի տեսակ պատերազմական պար: Որքան այս հայերը տարբեր են Կ. Պոլսի հայերէր: սա մի բոլորովին ուրիշ ժողովուրդ է: Եւ որքան անիրաւացի է դատել ամբողջ ազգի մասին հիմնւած այն բոլորի վրայ, ինչ որ տեսնում են Իօսֆօրի արիւրին: Ձէյթնը ծիծաղիլ արդեօք մի օտարականի վրայ, եթէ նա ինքին ևկած միջոցին դատէր ըստ գերմանայիներին՝ զինուորական, ազնական, թէ դիւզացի, մրիդիխարասէի մագապիւնների մի քանի դրայիրների համեմատ: Այդպէս են անում Կ. Պոլսի գերմանացիք հայերի վերաբերմամբ և նրանք այդ տեսակէտը տարածել են ամբողջ Գերմանիայում: Պոլսում քիչ շատ ապրողը պիտէ արդէն որ առեւտրական մրցումի ողին մատ ունի այդ տեսակէտի մէջ»:

Շատախը ցնցած էր: Լեռնէ լեռ, ձորէ ձոր Միջօրի անունն էր հնչում: Նա իր ընկերներով բուն էր դրել ժայռոտ բարձունքների վրայ և իր սարսափը սփռել ամէն տեղ: Քշնամիների համար դա մի առիւծ էր, որ յանկարծ դուրս էր պրծել երկաթեայ վանդակից և իր կրած ստրկութեան վռէժն էր պահանջում: Խաղաղութիւնը վրդոված էր Շատախում: քիւրդ ու թիւրք դողում էին: Հայ գիւղերի պատուհաս Շաքիրը իր սեփական բնակարանի մէջ սուկում էր նրա անունից և իջերջոյ ձարը կտրած՝ դուրսն առնում կորչում: Հայերն օրհնում էին քաջին, աղօթում նրա կեանքի համար, բայց քիչ չէին և պնդիւնները, որոնք անէճք էին թափում իրանց բարեբարի գլխին: Հիւանդ երեխան երբ չի անիծել բժշկին, ստրկական անզգայութիւնը հանգրստի, խաղաղութեան սիրահար է. քուն, միայն քուն — ինչ փոյթ, որ այդ քունը մահաբեր է: Բայց ոչ ոք այնպէս չէր անիծում Միջօրին, ինչպէս Ք... եցի Հայրօն:

Հայրօն չափազանց գոհ էր իր վիճակից, գոմում երկու լուծ հաստավիզ եզներ և մի քանի կլիան, դաշտում լաւ վարեջահողեր, որ իր ձեռքով մշակում էր: Ինքն էր, իր քոյրը և ծերունի հայրն ու մայրը — խաղաղ, սիրով ապրում էին Ճշմարիտ է, վարուցանքի կիսից աւելին քրդերն էին տանում, շատ էր աշխատում՝ քիչ վարելու, բայց էլի մնացածը բաւական էր մի կերպ ապրելու համար — էլ ինչ հոգս... Ասում էին, որ քրդերը հայ աղջիկ են փախցրել, որ զափթիկները հարեանի տանը գիշերել և վերաւորել են կնոջ պատիւը, որ ռեսի հարսին համբուրել է բեզը և այն և այլն: Բայց այդ բոլորը Հայրօնի շատ քիչ էր հետաքրքրում: Իրենք դեռ խաղաղ էին, Նազոյն ոչ ոք մինչև այժմ չէր ասել, թէ աչքիդ վերելը յօնք կայ — էլ ինչ դարդ, ինչ հոգս, ո՞վ է մեղաւոր, որ ուրիշները լաւ չեն նայում իրենց ընտանիքին, զափթիկն տուն եկաւ թող ընտանիքը գիշերը տանից հեռացնեն. Իհարկէ, որ տանը մնան, զափթիկն էլ վատութիւն կ'անի, բեզն էլ կը համբուրի. դէ նրանք անօրէն են, անօրէնն եզպէս կը լինի: Այսպէս էր մտածում Հայրօն, և խիճը հանգիստ էր: Ամէն առաւօտ, խարազանն ուսին, եզներն առաջն արած՝ դաշտ էր քնում, և երեկոյեան քթի տակ երգ մամաւրով վերադառնում: Հայրօն էլ ինչպէս չանիծէր, չատէր Միջօրին, որ իր յանդուգն շահաւակութիւններով իրար էր տւել քրդերին, զափթիկներին. նոյնիսկ ձայն կար, թէ գիւղում պիտի պահականոց էլ շինուի: Պահականոցը շինեց հէնց այն աղբիւրի մօտ, որից Ք... գիւղի աղիկները ջուր էին տանում: Եւ Հայրօն ատում էր Միջօրին ու իր ընկերներին: Սակայն մի դեպք այդ ատելութեան զգացմունքը էլ աւելի յորացրեց:

Աշուն էր: Գիւղից շատ հեռու, մի ամայի ձորակի մէջ Հայրօն ահօսում էր իր վերջին վարելահողը:

— Բարի աշոգում, Հայրօն: Նա յետ դարձաւ նայեց. Միջօն էր իր խմբով:

— Աստուծ բարին, պատասխանեց Հայրօն դժկամակութեամբ:

*) Տես «Իրոշակ» 1899 № 3, կր. 39:

— Ի՞նչ կ'ես անում, Հայրս:

— Աւր եմ անում, չե՞ս տեսնում:

— Ինչի՞ համար է այդ վարք:

Հայրը ասարթիմակ էր. Հայրոն պատասխանի փոխարեն՝ երկար նայեց Միքայիլին, ապա մտնաց.

— Ինչի՞ համար ե. կ'ասես ինքը չի հասկանում, որ տուն ու տեղի տէր ենք, հասցի հոգս պիտի քաշենք:

— Հաց ես աշխատում. հա՛ — ասաց խոսակիցը հեղնովեամբ — լաւ ես անում, Հայրս, լաւ ես անում: Բայց որ այդքան աշխատում ես, քիւրդ ու թիւրքը ընդ հաց թողնում են. տանդ հաց կա՞, այժմ:

— Ապա չկայ. . .

— Ըստ ուրախ եմ, որ կայ: Թե՛ որ այդպէս է, հարեան ջան, տեսնում ես, սար ու ձոր ընկած մարդիկ ենք, գեղերն էլ մոնել չենք կարող. մենք եղևներդ կը պահենք, գու վազեցի՞նք գեղ գնա՞, մի քիչ հաց ըրեր մեզ, հարեան ենք, հայ քրիստոնեայ ենք: Ամբողջ մի օր է, որ բան չենք կերել:

Ի՞նչ էր պահու. Հայրոն դնայ ֆիդայիներով, դաշաղներով համար հաց ընէր. . . նա փորձեց գլուխը աղատել յողմանութիւնը, դիւղի հեռաւորութիւնը պատճառաբանելով, բայց իզուր. Միքոն վերջիվերջոյ պահանջող հրամայող, անողորմ՝ հրամայող դարձաւ:

Ճաց չկար.

— Ասուած ձեք գործին երրեք յաջողութիւն չտայ, մամայ Հայրոն և եղևները թողնելով՝ դէպի գիւղ գնաց:

Պահականոցի տաղկից անցնելիս նա մի կանգ առաւ: Նրա գլխով մի գարհուրելի միտք անցաւ — շմանել արդեօք օնբաշիին պատմել ըրորը և միանգամից ազատել այդ դև Միքայիլը: Նա նոյնիսկ մի քանի քայլ արեց դէպի պահականոցը, բայց հենց այդ րոպէին որտեղից որտեղ՝ մի հատիկ անուն յիշեց, միակը, որ նա ո՞վ գիտէ երբ լսել էր ժամում, Յուզա՞. . . նա կանգ առաւ, շրթունքները մի քանի անգամ ինքնաբերաբար հնչեցին՝ «Յուզա՞. . . » «Յուզա՞. . . » նա լսում էր այդ անունը, և նրան նոյնիսկ թւում էր, թէ ինքը չէ ասողը, այլ մի ուրիշ խորհրդաւոր անձ նրան կանչում է՝ «Յուզա՞. . . » «Յուզա՞. . . » Հայրոն արագութեամբ անցաւ պահականոցի առաջից, նա մինչև անգամ մի փորք էլ վազեց. . . նա փախչում էր գայթակղութիւնից. . .

Եւ Միքոն ստացաւ հացի պաշարը: Բայց այս Եանր փորձութիւնը կրկնապատկեց Հայրոյի անտելութիւնը: Նա կ'ուզէր, որ Միքայիլն բռնեն, սպանեն, քերթեն, անյայտացնեն, բայց ինքը մաս չունենայ այդ բանում: Նա ո՞նքից վախենում էր:

Ելի օրեր անցան:

Հայրոն նորից ընկաւ իր սոխոքահան աշխատութիւնների յետևից, նորիսկ մտադաւ էլ Միքայիլին. . .

Անսպասի մտայլ ամպամած երեկոյ էր, երբ Հայրոն տուն էր դառնում դաշտից, դանդաղ ու անհոգ, ինչպէս այն զոյգ եղևները, որոնք ականջները կախ ձրգած օրորելով առաջ էին շարժուած: Եղևները որո՞նում էին, Հայրոն էլ երբ էր մտնում: Պահականոցի առաջ նա կանգ առաւ. քարացած: Նրա ականջին մի քնքարի կանացի ձայն հասաւ, մի այնպիսի ձիչ, որ նա մինչև իր ոսկորների ծուծը դողաց. . . Անսպասելի անգամ իրենց ականջները խընցին այդ ձայնից, Հայրոն ինչպէս չգողար. . . Ներսում մի ո՞նքի էր կատարում. . .

Ձոհը կին էր, աղբիւրի ժող երևում էր մի սափոր: Հայրոն ուզեց նորէն փախչել — ուրիշ ի՞նչ անէր. ներս մտնելի օրնուձիւն ազաղակել, ո՞վ, Հայրոն. . . Բայց նրա ինչ բանն է խառնել ուրիշ գործին. ո՞վ գիտէ, ում աղիկն է, — և նա մի քայլ ձգեց, սակայն երկրորդ քայլն անել անկարող էր. . . Հայրոն զգաց, որ ինքն անկարող է հեռանալ այդտեղից, ասես թէ նրան մեխեցին պահականոցի առաջ. . . Ձարհուրելի շարիքի հանդէպ զարթած առաքինութեան հզօր ձայն էր, որ նրան դիմեց, կաշկանդեց իր տեղում հակառակ իր կամբի:

Յէկ էլ յարկարձ՝ զափթիէների ձեռքից պոկուելով՝ դուրս փախաւ մի կին սրտաձմիկի միջով և Հայրոյին փախեցուց:

— Մեան ասպէր, աղատիր ինձ. . .

Նարոն էր. . .

Ամպերը որոտացին, կայծակը ճայթեց, Հայրոյի աչքերը մթնեց. . . նրան թւում էր, թէ տիեզերքը կործանուած է, աշխարհը վերջ է առնում. . . Նա ինքն էլ չգիտէր, թէ ուշաթափ քրօն ինչպէս տուն հասցրեց: Յետոյ խարազանը դէն շարտեց, տան մի անկիւնը քաշեց և կատաղութիւնից լաց եղաւ, երկար, երկար. . . Ազոուց նա լաց չէր եղել: Արցունքի խոշոր կաթիլները թափուած էին ամենքի համար, բոլոր վիրաւորած, անպատիւ եղած հայ կանանց ու աղջիկների համար, որոնց ցաւն այժմ միայն զգաց նա:

Արեւն գիշեր էր, երբ նա կանգնեց, սրբեց աչքերը, տան մի անկիւնից վերցրեց երկար կօպալը (ձեռնափայտ). . . Հայրը հասկացաւ, որ Հայրոն հեռու տեղ է դնալու:

— Ո՛ր կ'երթաս լա՛օ, քե՛ մեռնիմ, դուրսը մութն էր, երկիրը չար, երկինքը սև, չորս կողմերս կուփարնի ծով, ևս բէխէր սհաթին ո՛ր կ'երթաս, Հայրս ջան:

— Ձեմ կարող, հայր, էլ չեմ կարող. . . Ես տեսայ, ևս կոյր աչքերս տեսան, չեմ կարող տանել ես պէտք է երթամ. . . Անձր՛ն է գալիս, աւելի լաւ թող գայ, թող կարկուտ էլ գայ, թող քարեր, պէտ պէտ քարեր թափուին երկնքից ևս գլխիս. . . Օ՛, ես անիծում էի Միքայիլին, ես անիծեցի նրա Գործը, և իմ շրթունքները չայրեցին, և ես չպապանձեցի. ինչո՞ւ Ասուած: Թէ Միքայիլ գործն անիծած է, ո՞րն է օրհնած, իմը. . . որ դատեմ՝ քրդերն ուտեն, քոյր պահեմ՝ որ զափթիէն տանի. . . Հօ՛, թողեմ ևս գլուխը. . . Գեռ գրակ էլ ունիմ. . . Հայրօն գրակ. . . Ինչո՞ւ, ի՞նչ իրաւունքով. . . Գէ՛ ասա՛, բոլոր կնիկներն էլ պիտի գրակ դնեն էլի. . . Եւ նա խլեց գլխից իր քօլօղը, զարկեց գեանին՝ և դուրս գալով՝ կորաւ խաւարի և անձրեկի մէջ. . . Պէտք էր Միքայիլն դանել:

Երկար ժամանակ նա դնում էր մտքում կրկնելով Միքօ, Միքօ. երբեմն վազում էլ էր: Անձրեղ ծծում էր նրան, քամին խառնում նրա մազերը, խճճում գլխին, և նա շարունակում էր վազել անընդհատ, ինչպէս մի զարացած գիշերային ոգի, որ փնտռում էր իր դոհին, կամ՝ ինչպէս մի մեռելի ուրական, որին մօր անէնքը հալածել էր իր գերեզմանից այդ զարհուրելի ժամին. . .

Երկար գնաց. . . Գեռ խաւար էր. յողմած նստեց մի քարի վրայ, մտածեց: Օ՛, զարհուրելի բաներ էր մտածում. . . Նա կ'ուզէր այդ ժամին բոց դառնալ հրդեհեղ ամբողջ աշխարհը, որպէսզի այն պահականոցն էլ իր

զափթիկներով այրւի մոխիր դառնայ. պէտք էր վրէժ առնել պէտք էր մահու գնով սրբել քրոջ պատւի անարգանքը... Բայց ինչպէս... Նա նորէն յիշեց Միքոյին: Գտնել նրան... Օրեր ու շաբաթներ թափառեց Հայրօն, գտաւ Միքոյին և նրա ոտներն ընկաւ.

— Էլ չեմ կարող ապրել, չեմ կարող խմբապետ մորթեցէք, քերթեցէք ինձ, դիակս շներին ձգեցէք, ինչ հարկաւոր է այսպիսի կեանքը... Օ, ինձ ասում էին, ինձ պատմում էին, բայց ես ուրիշի ցաւը չէի հասկանում, իմ միտը չէին կտրել, իմ սիրտը չէին ծակել, իմ քոյրը չէր պղծուած, ես անզգայ էի Ա՛յժմ... այժմ սպանեցէք ինձ, միայն թէ առէք Նազոյի վրէժը: Կոտորեցէք այդ պահակատունը, կոտորեցէք զափթիկներին, օ, կոտորեցէք բոլոր զափթիկներին, առէք բոլոր հայ կոյսերի վրէժը...:

Եւ նա մտնում էր ցաւից, տրորում էր, չանգուում էր կուրծքը: Նա այրում էր ինչպէս բոցերի մէջ: Դեռ երբեք անսիրտ ապերաստութիւնն այդ աստիճան անողորմ կերպով չէր պատժուած, երբեք ապաշխարութիւնն աւելի անկեղծ, աւելի գառն չէր եղած: Եւ Հայրօն հայդուկ դարձաւ: Նա սեղմեց իր այրւած կրծքին պաղ հրացանը, բայց թախիծը նրանից չհեռացաւ. բոց ունէր ներսում. քրոջ անպատուութիւնը նրան հանգիստ չէր տալիս: Նրա ամենասուրբ ցանկութիւնն էր տեսնել պահականոցը, այդ աւազակների բոյնը՝ բոցերի մէջ և պահակները խողխողած, ապա շունչը փչել հանգիստ: Կոտորուած, կրկնում էր նա յաճախ, դժոխք ուղարկես կ'երթամ, գլուխս հազար մահու կրտամ, միայն վախենում եմ աչքերս չտեսնեն պահականոցի ջարդը...:

Հասաւ վերջապէս Հայրօյի համար սրբազան վրէժ-խնդրութեան ժամը:

Ուշ աշուն էր, խաւար գիշեր: Ք... գիւղը քնեց իրկոտ քնով: Այն երկրում, ուր Շատախն է, գիւղերը չեն քնում, այլ մեռնում են գիշերները վտանգի ահից: Անքուն էր միայն Նազոն: Իր անարգանքից և եղբոր անյայտանալուց յետոյ՝ նա քուն չուներ, նա տանջւում էր, նա սպասում էր եղբորը... Հեռու մի շուն ունաց ողբաձայն, տխուր, ապա կողկանձելով նրան ձայնակցեցին մի քանի ուրիշները. կաղմեց մի չարագիւղակ, այլանդակ համբոյ՝ — միակ նշանը, թէ գիւղում բնակիչներ կան: Յանկարծ մի հրացանի տրաքոց, գիւղը էլ աւելի կծկեց, ո՛չ մի դուռ չձնչաց... Նորէն հրացանի պայթիւն և ապա՝ մի անընդհատ միահամուռ գոռոց գնդակների...:

Նազոն կամացուկ նստեց անկողնի մէջ: Նա ականջ էր դնում... Հրացանների գոռոցի մէջ նա և մարդկային ձայնի էին լսում ուղիղ պահակատան կողմից: Նազոն ցնցեց: Նրան յանկարծ թւաց, որ այդ բոլորն իր անձի հետ ինչ որ կապ ունի: Մի ներքին ձայն նրան ասում էր, որ ինքն է այդ ահաւոր հրացանաձուլութեան, այդ աղմուկների պատճառը, որ անպատուութեան վրէժն է լուծում, որ այնտեղ է Հայրօն...:

Նա կամացուկ շորերը հագաւ, վեր կացաւ, դուռը բացեց զգուշութեամբ և բարձրացաւ խրճիթի կուռը: Տեսարանն ահաւոր էր... Ամբողջ գիւղը լուսաւորուած էր. պահականոցը վառւում էր բոցերի մէջ և այդ հըրդեհի շուրջը կատաղի կռիւ էր մղում, հրացանները ձայնում էին անընդհատ: Նազոյի յուզած կուրծքը

բարձր ու ցածր էր լինում... Նա և՛ սարսափում էր այդ կատաղի որոտներից, և՛ հաճոյքով էր դիտում հըրդեհի բոցերը: Օ, սրբազան բոցեր, որոնք լիզում, մաքրում էին նրա պատւի վրայի կեղտն ու արատը: Այն միտքը, թէ իր եղբայրն այնտեղ է, այդ կուր մէջ է, գուցէ այդ բոցերի մէջ, գուցէ վիրաւոր, նրան մի անօրինակ քաղութիւն ներշնչեց. նա համարեա անյաղձելի պահանջ զգաց այնտեղ լինել այդ բոցերի մօտ, իր եղբոր մօտ, մտտիկից տեսնել իր դահիճների կոտորածը, լսել նրանց մահամերձ հոնգիւնները, նրանց հառաչանքն ու ձիջը, տեսնել իր եղբորը և նրա ընկերներին իրենց սրբազան զայրոյթի, սրբազան ոգևորութեան մէջ...:

Եւ ահա նա ցած իջաւ կտրից և ուր մտր փողոցներով դէպի պահականոցը վազեց: Մինչ այդ՝ պահականոցի ջարդը շարունակում էր: Զինւորներից ոմանք ունում էին բոցերի մէջ խորովելով, ուրիշները դուրս գալ փորձելով՝ ընկնում էին հայդուկների գընդակներից, ոմանք գլուխները կորցրած խելագարի պէս դէսուդէն էին վազում: Կատաղի, անգութ էր մանաւանդ մի հայդուկ, մի թիկնաւետ, բարձրահասակ գեղջուկ, որի գլուխը փաթաթուած էր միայն մի լաթի կտորով: Խմբապետը՝ Միքոն՝ որոտազին հրամաններ էր արձակում: Բոցերով լուսաւորուած այդ զայրացկոտ դէմքերը զարհուրելի էին: Մէկ էլ յանկարծ բոցերի միջից մի վերջին գնդակ թռաւ. գլուխը թաշկինակով ծածկած մարդը երերաց, գունատուեց: Հէնց այդ ընդմիջին Նազոն գրկեց նրան.

— Վախ, քոռանամ ես, Հայրօ ջան...:

Եղբայրը քնքուշութեամբ փառեց քրոջ վզին և համբուրեց նրան... Հայրօն գունատ էր, շրթունքները դողդողում էին. նա կամաց կամաց իր ամբողջ մարմնով ծանրացաւ քրոջ ուսին: Կրծքի վէրքից հոսում էր արիւնը: Քոյրը սղմեց ձեռքը վէրքի վրայ և կրկին ու կրկին համբուրեց եղբոր գունատ ձակատը... Հայրօն աւելի և աւելի կախեց, ծանրացաւ քրոջ ուսին և նա հաղիւ կարողացաւ թոթովել:

— Նազօ ջան, հիմա կարող ես իմ գրպակը գլխիս դնել...:

Վրէժխնդրութեան բոցերը լուսաւորում էին պատւի նահատակի գունատ դէմքը: Նա մեռնում էր, բայց քրոջ անարգանքը սրբած էր...:

ՂԱՐԻԲ

Խ Մ Բ Ա Գ Ի Ո Ի Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Յ

1898 թւին տեղի ունեցած Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի վճռին համաձայն, «Դրօշակ»-ի խմբագրութիւնը ապրիլի 15-ից սկսել է հրատարակել մի Յաւելած, որ վերաբերում է նոր հնչական կուսակցութեան և Դաշնակցութեան միջև ծագած միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդրին: Յաւելածը սպագրւում է սակաւաթիւ օրինակներով և բաշխւում է կօմիտէների միջոցով՝ այդ խնդրով հետաքրքրուողներին միայն:

*

Տեղի սղութեան պատճառով ներստուութեան ցանկը կը հրատարակել յաջորդ համարում:

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցեով՝
 Rédaction du Droschak, Genève (Suisse)

Հ. Գ. ԲԵՐՈՅԻ
ԳՐԱԳՐԱՐԱՆ
A. P. BORO
LIBRARY
ՀԵՏ

ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՍ ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՆՈՐ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Միութեան բուն խնդիրն դիմելուց առաջ՝ մենք հարկ ենք համարում մի ընդհանուր և համառօտ տեսութիւն անել մեր յեղափոխական կեանքի անցեալի մասին, դիւրութիւն տալու համար ընթերցողին աւելի լաւ ըմբռնելու Աերակազմեալ Հնչակեան կուսակցութեան գրութիւնը և մեր վերաբերումը միութեան կամ համերաշխ գործակցութեան խնդրին:

* * *

Դեռ 80-ական թւի սկզբներում թիւրքիացի հայը իր Յունսօներով, Չաթո-Շէրօսներով, Թիրարներով, Արաբօներով ակնբերէ դարձրեց, որ գիտակցական և կազմակերպւած կուսի պատրաստութեան ժամանակը հասել է արդէն: Կեանքի անմիջական ծնունդ այդ հայրուկներէ գործերը, յեղափոխական առաքեալների Օսմ. Հայաստան պտտելը և մի քանի այլ պարագաներ այն աստիճան գրաւեցին հայ հասարակութեան ուշադրութիւնը հայկական խուլ շարժման վրայ, որ գրաւոր քարոզների մի քանի անաղղ փորձերից յետոյ վերջապէս հնարաւոր դարձաւ արտասահմանում «Արմէնիայի» կանոնաւոր հրատարակումը, որ սկիզբ դրեց մեր շարժման կազմակերպւած պրօպագանդայի շրջանին և, չնայած իր փոփոխամիտ ընթացքին, իր ժամանակին որոշ նշանակութիւն ունեցաւ: Ընթերցողներն անշուշտ յիշում են «Հայրենասիրաց Միութիւն» կոչւած կազմակերպութիւնը, նրա օթեակները: Ինչպէս անորոշ էր ինքը՝ «Արմէնիան», նոյնպէս անորոշ էին և Հայրենասիրաց Միութեան ձգտումները: Բայց հակառակ «Արմէնիայի» վարանոտ քարոզներին կեանքն այս անգամ ևս առաջ անցաւ: Խօսքին պիտի յաջորդէր գործը, և Գօլջեանի ու Ագրիպպասեանի նահատակութիւնը նոր շրջան բաց արեց տարտամութեան մէջ դեբերող մեր երիտասարդութեան համար. սկսեց արիւն թափելու, արիւն օվ քարօզելու շրջանը: Մինչև այդ ժամանակ կեանքի մէջ պատրաստւած մտքեր կային, գիտէին, թէ ինչ պէտք էր անել, գիտէին մինչև իսկ, թէ ինչպէս պէտք էր անել, բայց առաջին քայլն անողը չկար: Հարկաւոր էր օրինակ տալ. Գօլջեանը և Ագրիպպասեանը բաց արին գիտակցաբար արիւն թափելու ճանապարհը և ցնցեցին ամբողջ հայ երիտասարդութիւնը: Սկսած էր արիտացիայի շրջանը: Գօլջեանի և Ագրիպպասեանի նահատակման հետեւեցին Կարինի յուզումները և Պոլսի 1890 թւականի նշանաւոր ցոյցը, որ կազմակերպւած էր եկւոր հնչակեանների և տեղական Հայրենասիրաց Միութեան նախկին անդամների ձեռքով: Այդպիսով Հնչակեան կուսակցութիւնը, մտնելով ագիտացիայի շրջանի մէջ, իր կողմը գրաւեց թէ Հայրենասիրաց Միութեան և թէ ուրիշ խմբերի աւելի համարձակ, աւելի յեղափոխական մասը: Եւ Հնչակեան հետագայ գործունէութիւնը կրում էր մինչև վերջին ժամանակներս գլխաւորապէս ագիտացիական բնաւորութիւն, որ չի պահանջում երկարատե աշխատանք, լայն կազմակերպութիւն, միջոցներ՝ ղէնք ձեռք բերելու, ղէնք մատակարարելու ժողովուրդին, կուղ ուժեր անմիջապէս պատրաստելու ևն, բայց որ, օպտելով

ժողովուրդի մէջ արդէն այս կամ այն պատճառով ըստեղծւած յեղափոխական տրամադրութիւնից, հրապարակ է հանում այն որոշ բողոքներ արտայայտելու, պահանջներ դնելու համար, մի խօսքով ցոյցեր է անում: Բայց ագիտացիան, որ գլխաւորապէս անհատական գործունէութիւն է, որ անհրաժեշտութիւն էր մեր յեղափոխական շարժման միայն մի որոշ, սկզբնական շրջանի համար, պէտք է լայնանար և լայնանարով փոխէր հետզհետէ իր բնաւորութիւնը, առաջ բերելով բուն կուսի, խմբական կուսի շրջանը, ուր մարդիկ դուրս են գալիս ոչ թէ իրենց, այլ թշնամու արիւնը թափելու մտադրութեամբ: Արպէս զի դարեւոր ստրկութեան մէջ ապրած ժողովուրդը դուրս դայ իր դրութիւնից և մի օր իբր իրական ուժ ներկայանայ իր թշնամու դիմաց, հարկաւոր է տալ նրան զէնք, որի շուրջը կը խմբեն ժողովուրդի արդէն յեղափոխապէս պատրաստ անհատները: Այդ անհատները դարձեալ կը ռիւններով անընդհատ կուսներով, իրենց հերոսական օրինակներով միայն կարող են աւելի և աւելի ստաւրացնել կուսիների շարքերը, և այդ կուսի ճանապարհով միայն որ և է ժողովուրդը կարող է հասնել ընդհանուր ապստամբական դրութեան: Հնչակեան կուսակցութիւնը չկարողացաւ ընթանալ կեանքի հետ, և ղէնք ներս մտցնելու, մարտական կուսի խմբեր կազմելու ու թշնամուն զգալի հարւածներ տալու համար պատրաստելու դերն ընկաւ գլխաւորապէս Դաշնակցութեան վրայ: Յոյց տալու համար, թէ մինչև որ աստիճան Հնչակեան կուսակցութիւնը անընդունակ գտնեց բաւականութիւն տալու հայ ժողովուրդի յեղափոխական նոր պահանջներին, առաջ բերեց մի քանի օրինակներ: Հնչակեան Մուրատը, երբ փոխեց իր գործունէութեան վայրը, երբ ձեռնարկեց Սասունի գործին, սկսեց Դաշնակցութեան հետ բանակցել և մի քանի անաղղ փորձերից յետոյ, ստիպւած եղաւ որոշ պայմաններ կապել սահմանագլխի մեր կոմիտէների հետ, որով և սկսեց նրանց մէջ համերաշխ գործակցութիւն: Պարզ է, որ Հնչակեան կուսակցութիւնը, մենակ, դեռ 1893 թւականին չէր կարողանում գոհացում տալ մի այնպիսի գործունէութեան պահանջներին, որպիսին էր Սասունինը: Պոլսի մէջ գործելիս, Մուրատները Դաշնակցութեան աջակցութեան կարիք չէին զգում: Մուրատի ձերբակալումից յետոյ նրա ընկեր Դժոխքը, նոյնպէս հնչակեան, յոյսը կտրած բողոքովն Հնչակեան կուսակցութիւնից, սկսեց գործել Տարօնում բացառապէս դաշնակցական միջոցներով և դաշնակցական ընկերների հետ, կրելով սակայն միշտ իր վրայ «հնչակեան» անունը: Հնչակեան կուսակցութիւնը, մենակ, իր սեփական ուժերով, զինւած խումբ երկիր մտցնելու առաջին փորձն արեց բաւական ուշ, 1895 թւականին միայն: Հնչակեան խումբը, — որբան յիշում ենք, 15-16 հոգուց բաղկացած, — ամբողջովն ձերբակալուեց Սալմաստից Վան տանող ճանապարհի վրայ: Յեղափոխական խմբի ձերբակալելը, այն էլ առանց կուսի, մի չեղած, արտակարգ երևույթ էր Վասպուրականի յեղափոխական

կեանքի մէջ: Որքան մեզ յայտնի են ձերբակալման մասնաբաժանութիւնները, մենք ոչ մի տեղիք չունենք կասկածի առնելու խմբի անդամների և նրա առաջնորդի անհատական քաջութիւնը: Բայց ձերբակալման փաստը ակներև պիտի դարձնէր, որ բացի այդ յատուցութիւնից անհրաժեշտ են և շատ ուրիշ պայմաններ, որոնցից զուրկ է եղել փորձառութիւն չունեցած, այդ տեսակ ձեռնարկների անհատական անհատական կազմակերպութիւնը:

Աւերորդ համարելով թուել այստեղ մի առ մի այն հնչակեան անհատ-գործիչներին, այն հնչակեան խումբերը, որոնք թողնելով հնչակեան կուսակցութիւնը, յարել են վերջնապէս Դաշնակցութեան — գլխաւորապէս նոյն շարժառիթներից դրդած — չինք կարող չլիջել այստեղ այնպիսի խոշոր փաստեր, ինչպէս Տրապիզոնի, Երզնկայի, Գաղատիայի հնչակեան կազմակերպութիւնների Դաշնակցութեան միանալը:

Եթէ այս փաստերին աւելացնենք և այն, որ յաճախ դա՛նազան հնչակեան անհատներ ու խմբեր զենք ստանալու նպատակով այլևայլ դիմումներ են արել Դաշնակցական մարմիններին, պարզ պէտք է լինի, թէ հնչակեան կազմակերպութիւնը իր մէջ կրում էր մի պակաս, որ ժամանակի ընթացքում աւելի և աւելի զգալի էր դառնում:

Հնչակեան կուսակցութեան կողմից կոտորածների ժամանակ ցոյց տալով չնչին դիմադրութեան փաստը ամենալաւ լուսաբանումը կարող է լինել մեր վերև սասծներին: Ընդդիմադրութեան թուլութեան պատճառը այն չէր միայն, որ կոտորածների շատ վայրերում հնչակեան կազմակերպութիւնները գոյութիւն չունէին, — ոչ. հնչակեաններ կային մի քանի տեղ, բայց այդ կուսակցութիւն միայն յայտնի եղաւ, որ նրանք կամ զէնք չունէին կուսակու, ինչպէս օր. Կարինի հնչակեանները, կամ զէնք ունէին, բայց անվարժ էին կուսակու, ինչպէս Պոլսի 1895 թւականի ցուցարարները:

Այս սողերը կարգալիս ընթացողը անշուշտ յիշում է Ձեյթունի ապստամբութիւնը, Ձեյթունի «հնչակեան գնդերը, հնչակեան հրացանները, հնչակեան փամփուշտները»: Սակայն այս բոլորը նշանակութիւն կունենանք, եթէ չլինէր հին Կեդրոնի անուրջների արգիւնք միայն:

Եւ որպէս զի մեր սասծները կասկածի չենթարկւին այն ընթացողների կողմից, որոնք լաւ չեն ծանօթ մեր գործնական յեղափոխական կեանքին, նոյնպէս և նրանց կողմից, ուրոնք արամադիր կը լինեն մեկնաբանելու մեր բացատրութիւնները «կուսակցական ոգով» կամ այլ միտումներով, մենք առաջ կը բերենք փաստեր, այս անգամ զուտ հնչակեան պաշտօնական վկայութիւններից քաջած:

Հնչակեան հին Կեդրոնի դատապարտութեան վճռագրում (9 սեպտեմբեր 1896) կարգում ենք հետևեալը:

«Նկատելով որ իրենց ձեռքը ունենալով բաւական քանակութեամբ զէնք եւ ռազմամթերք, հակառակ իրենց խոստումներուն որ եւ տւել ձեռնարկ չեն արած այդ զէնքերը երկրին այս կամ այն Մասնաճիւղներուն հասցնելու, մինչև թէ Սասունի, Թէ Փոքր-Հայրի եւ Թէ Կիլիկիոյ Մասնաճիւղերը թախանձարին զէնք ուզած են իրենցմէ, շատ անգամ ներմուծելու միջոցներն իսկ ցուցնելով եւ մի քանի տեղերէ դրամ ալ ուղարկելով:

Նկատելով որ Սասունի շարժումներու ժամանակ ի եւ է դրամական կամ ուրիշ կարգի օգնութիւն չեն ուղարկած հակառակ տեղին գործիչներուն պահանջներուն:

Նկատելով որ Սասունի եւ ...-ի համար ...-էն դրկուած երկը հարիւր յիսուն (350) ոսկին եւ ...-էն դրկուած երկու

հարիւր (200) ոսկին յատկացուած նպատակին չեն գործածած: Նկատելով որ Սասունի ապստամբութեան համար Ամերիկայի Մասնաճիւղերէն եկած զուարթները եւ Սասունի տուտապեաններուն համար Լոնտոնի մասնաճիւղէն եկած հարիւր ութը (108) ոսկին, ինչպէս նաեւ Ամերիկայի միւս Մասնաճիւղերէն այս նպատակաւ եկած զուարթները իրենց նպատակներուն չեն գործածած:

Նկատելով որ ... զէնք դրկելու համար իրենց դրկուած հարիւր վաթսուն (160) ոսկին չեն գործածած յատկացուած նպատակին:

Նկատելով որ հակառակ իրենց զուարթ խոստումներուն, զոր ըրած են Կիլիկիոյ ընդհանուր ներկայացուցչին եւ քերականի խոստումներուն, զոր ըրած են պ. Ապահին, չեն դրկած իրենց արամադրութեան տակ զանուած զէնքը եւ ռազմամթերքը, եւ նոյն իսկ այդ մասին ամենափոքրիկ ջանք մ'անգամ չեն արած:

Նկատելով որ Կիլիկիոյ զէնքերու համար ...-էն իրենց հասած հազար հարիւր վաթսուն երեք (163) ոսկին միայն 650 ոսկին դրկած են, այն ալ շատ ուշ եւ շատ ծախող կերպով 1):

Նկատելով որ Ձեյթունի ապստամբութեան առաջ, ապստամբութեան միջոցին եւ ապստամբութեան վերջ իրենք քուտացած են դրամական կարիւր գումարներ գանազան կողմերէ. ինչպէս Պոլսէն, Ամերիկայէն եւ ուրիշ տեղերէ ուղղակի Ձեյթունիներուն հասցնելու նպատակաւ, սակայն իրենք այդ դրամներուն շատ աննշան մէկ մասը միայն դրկած են Ձեյթունը...

«Ներկայ դեպքում հետաքրքիրը այն չէ, թէ ով է մեղաւոր. միայն հնչակեան հին Կեդրոնը, որ հոգ չի տարել «իբր տրամադրութեան տակ գտնուած» զէնքը տեղ հասցնելու, ինչպէս պնդում են մասնաճիւղերը, թէ իրենք մասնաճիւղերը, որոնք սպասել են, որ «ամենակարող» Կեդրոնը ամէն բան ինքն անի. գուցէ մեղաւոր են երկու կողմն էլ գուցէ և Կեդրոնի «տրամադրութեան տակ գտնուած զէնքերը» իսկապէս այնքան էլ նրա «տրամադրութեան տակ» չեն եղել, ինչպէս վկայում է հին Կեդրոնի ամբաստանագրի մի այլ կետը. գուցէ այդ զէնքը տեղափոխելու արժանի զէնք էլ չէր, եթէ միայն դա այն զէնքի հոգաւոր ամբարն է, որ մեզ ծանօթ է և որ մի ժամանակ Դաշնակցութեան տրամադրութեան տակ պիտի մտնէր...

Բայց ով որ էլ մեղաւոր լինի, մի փաստ ակներև է դառնում — այդ այն է, որ վճռագրի տակ ստորագրած բոլոր հնչակեան գործիչները վկայում են միաբերան, թէ իրօք հնչակեան կուսակցութիւնը երկիրը զէնք մտցնելու համար հնչակեան կուսակցութիւն չի ունեցել, թէ և վերջին տարիներս միշտ դրա պահանջը զգացել է:

Տեղը չէ այստեղ մտնել պատճառների քննութեան մէջ, չենք էլ ուզում ստել, թէ հնչակեան կուսակցութիւնը մարտական խմբեր չի կազմել, բոլորովին զէնք չի մտցրել երկիրը և այնու Վենք միայն արձանագրում ենք այն իրողութիւնը, որ հնչակեան կուսակցութիւնը իր առաջին քայլին անելով ազիտացիական շրջանի մէջ, այդ տեսակ գործունէութեան կնիքը պահպանեց նաև իր հետագայ քայլերում և անկարող գտնուելու, չենք ասում՝ ըմբռնելու, այլ գոհացում տալու յեղափոխութեան նորագոյն պահանջներին:

Այդպիսի հանգամանքներում շատ բնական է, որ այդ կուսակցութիւնը հետզհետէ պիտի թուլանար, կորցնէր իր ոտքի տակի հողը՝ ձիշդ այնպէս, ինչպէս թուլանում էր իր ժամանակին Հայրենասիրաց Միութիւնը, տեղի տալով հնչակեան կուսակցութեան:

Վերջացնում ենք մեր այս ընդհանուր և համառոտ

1) Դրա մի մասը ընկել է կառավարութեան ձեռքը:

տեսութիւնը: Ինչպէս ընթերցողը տեսնում է, Հնչակեան կուսակցութեան թուղանալու հական պատճառը մենք փնտռում ենք ոչ թէ այս կամ այն գործիչի կամ խմբի զեղծումների մէջ, ինչպէս այդ անում են երկու կողմի Հնչակեաններն էլ, այլ գլխաւորապէս կուսակցութեան գործունէութեան եղանակի մէջ: Եւ թէ Հնչակեան կուսակցութիւնը ցանկանում էր վերջ տալ իր խախուտ դրութեան, պահպանել իր գոյութիւնը իբր յեղափոխական մարմին, պարտաւոր էր իր ուշադրութիւնը դարձնել գլխաւորապէս այն փոփոխութիւնները որոնք Հնարաւոր պիտի դարձնէին գործունէութեան պակասը լրացնելը:

Տեսնենք Տիմա, թէ ինչ եղաւ, և թէ որքան Հնարաւոր էր Հնչակեան կուսակցութիւնը ոտի կանգնեցնելը Այդ նպատակով նախ մի հարեանցի հայեացք ձգենք այդ ժամանակէլ, Հնչակեան գործիչների բարոյական ընդհանուր մթնոլորտի վրայ:

Հնչակեան, ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏՐ

Հնչակեան կուսակցութեան խախուտ դրութիւնը չէր կարող իր բացասական ազդեցութիւնը չթողնել Հնչակեան կազմակերպութեան բարոյական մթնոլորտի վրայ: Գա էր պատճառ, որ զանազան բախտախնդիրներ կարողանում էին «ներս սարգել» նրա մէջ և մինչև իսկ զեկազարի դեր ստանձնել, որ լայն, ազնիւ ձգտումները մանրանում էին, հերոսները գաճաճանում, վատ կրքերը չէին զսպում, կեղտոտները հաստատում էին և լաւերը կոմպրոմիսների դիմում:

Հնչակեան կուսակցութեան այդ մթնոլորտի վրայ հարկ ենք համարում կանգ առնել, որովհետև ինչ պայմանների ծնունդ էլ ընկի, նա իր որոշ դերն է խաղացել և միութեան խնդրի մէջ բռնում է ոչ-երկրորդական տեղ, և որպէս, զի այս անգամ ևս մի անգամ ընդամենը հեռացրած լինենք մեզանից մեղադրանքների որևէ առիթ, թողնենք մեր լսածները, մեր տեսածները և բաւականանանք զուտ Հնչակեան աղբիւրներից քաղած փաստերով, շատ տեղ այդ փաստերի սուղագութեան պատասխանատուութիւնը ձգելով աղբիւրների հեղինակների վրայ:

Այդ աղբիւրներից մենք իմանում ենք, որ Հնչակեան զեղծումների բունը երկու մարմիններ են եղել՝ Պօլսի մասնաճիւղը և Կեդրոնը:

Պօլսի Հնչակեան վարչութիւնը 1896 թուականի սկզբին իբր անդամ հրաւիրում է Արփիար Արփիարեանին: Պօլսի Հնչակեան մասնաճիւղին չէր կարող յայտնի չլինել Արփիարեանի անցեալից գոնէ երկու փաստ — յեղափոխութեան պատրաստիւթիւնը և իր ցրած որոշ գումարի կրանումը և նրա նշանաւոր Կեդրոնի թիւնը: Եթէ այսուհանդերձ մասնաճիւղը դիմում է արդէն արտաւերջած անձնաւորութեան անջնջութեան, դա պարզ ցոյց է տալիս, թէ որքան ստորացել էր արդէն այդ ժամանակ Հնչակեան գործիչների բարոյական մակարդակը և թէ որքան քիչ պահանջներ էր դնում Հնչակեան մասնաճիւղը իր պատասխանատու գործիչների նկատմամբ:

Հնչակեան Կեդրոնի ասելով՝ Արփիար Արփիարեանը անյարտ պատճառներով աջողել է ներս սարգել Ա. Պօլսի Հնչակեան վարչութեան մէջ և գառնալ նրա

անդամ և նա՛ Կեդրոնը, խախտ բողոքել է, «այդ կամայական ընդունելութեան դէմ, իմանալով Արփիարեանի անցեալը¹⁾, որպէս նաև ամենքին արդէն յայտնի լինելով մի քանի դժեր նրա այդ անցեալից»: (Շրջաբերական Հնչակեան հին Կեդրոնի, № 1, 12/24 օգոստոս 1896): Սակայն այդ դէպքում հասկանալի չեն այն ներողութեւրը, որոնք տպագրեցին «Հնչակում» յօդուտ Արփիարեանի, երբ Պօլսում տեղի ունեցաւ Դաշնակցականների փորձը նրա դէմ (տես «Հնչակ» 1896 № 2): Բացի այդ՝ նոյն խնդրի մասին ահա թէ ինչ տեղեկութիւններ ենք գտնում Հնչակեան վերակազմաւ Կեդրոնի 1 դեկտեմբեր 1896 Շրջաբերականի մէջ:

Արփիար Արփիարեան Կ. Պօլսոյ վարչութեան անդամակցած է նոյն վարչութեան անդամներուն հրաւերով: Պ. Ա. Արփիարեան ինքը կը կատարէր Կեդրոնին հետ Կ. Պօլսոյ վարչութեան պաշտօնական թղթակցութիւնները, ինչպէս նաև «Հնչակ» թղթակցութիւնները, որոնք Կ. Ս. ստորագրութիւնը կը կրէին: Ինչպէս կը տեսնուին Կ. Պօլսոյ ցոյցին ստանն և անկէ վերջ հաստատուած Պօլսոյ նամակներէն, ինքը իր «գրով» կը ղրկէր Կեդրոն գանձուելիք փոխանակագրերը...» և այլն:

Իսկ երբ Արփիարեանը Լոնդոն է գալիս, Կեդրոնի անդամները ամէնասիրալիք ընդունելութիւն են ցոյց տալիս, «Հնչակը», «Ապտակը» բաց են անում նրա առաջ իրենց հետ միշտ անբաժան են պահում նրան և ին: (տես նոյն Շրջաբերական):

Արփիարի ընդունելու խնդրի հետ կապած է նաև դրամական զեղծումների խնդիրը:

Հին Կեդրոնի^{12/24} օգոստոս 1896 Շրջաբերականի մէջ գտնում ենք հետևեալը.

Յայտնի է ամենքին, որ ինչպէս Կ. Պոլսի 1895 թուականի սեպտեմբերի ցոյցի մեջոցին, նոյնպէս դրանից յետո՛ւ ամսերի ընթացքում՝ Կ. Պոլսի Հնչակեան վարչութիւնը մեծամեծ գումարներ ձեռք բերեց ազգային նպատակի, յեղափոխութեան և Զէյթունի անունով: Այդ ժամանակները Կ. Պոլսի Հնչակեան վարչութեան մէջ էր Արփիարեան: Յայտնի է նոյնպէս, որ այդ դրամական հաւաքումները կատարուած էին նաև ամեն տեսակ եղանակով սպանական մեղքներով, մեղքներով, որոնք դէմ քանիցս Կեդրոնին քողարկեցին արեց Կ. Պոլսի թէ՛ Հնչակեան վարչութեան, թէ՛ Հնչակեան անհամարներն և «Հնչակում» էլ (№ 15 փետրվար 1896) Յայտարարութիւն տվեց՝ չզիպումսարկ վերոյիշած մեղքներով արած դրամական հաւաքումների նկատմամբ իր վրայ որևէ պատասխանատուութիւն վերցնել, քայքայ դժբաղաւարտ, Կեդրոնին քողարկեցին անպակաս մասին, և սուկակ սպանականներով և մինչև իսկ սպանութիւններով մեծամեծ գումարներ ձեռք բերվեցան՝ Հնչակեան, յեղափոխութեան ու Ազգի անունով:

Այսպէս, իբր Կ. Պոլսի Հնչակեան վարչութիւնը, չախտակ Կեդրոնին քողարկեցին, այդպիսի ընթացք անց, նա աջողեց կարճ ժամանակում գումարել տասնեակ հազարներով ոսկիներ, ըստ որում հասարակութեան մէջ յայտնի անձնաւորութիւնների խօսքով, որպէս՝ և Կուսակցութեան պատկանող և անկասկածա անդամների ուսանց վկայութեամբ, մասաւորապէս 18-20 հազար ոսկիի հասաւ ձեռք բերած դրամների գումարը:

Այդ գումարն, որ հաւաքվել էր Հնչակեան անունով լինելով կարգադրվեցաւ և վեր մասը Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Գանձարանը հասած գումարը միայն 1400 ոսկի է, և 11-ը գումարն էլ Կ. Պոլսի Հնչակեան վարչ-

1) Այս պը անցեալով:
 Արփիարեանը 1890-ին գնում է Կովկաս Խորէն Նար Բէյին և Երևան և պաշտօնով, յեղափոխութեան պատրաստով ձեռք է ձգում և կրնում 2,000 ր., Պոլսի քաղաքակրթութեան ժամանակ «ամբաստանում է իրեն յեղափոխականներ, Խորէն Նար Բէյին, վարդապետ Բէյ Յատեանին, զորոք թիկապետներն», քաղաքի դուրս գալով յետոյ «ստեղծագործում է...» «Մի-ըսպանից», քաղաքական անկման այդ ամենաստոր ու ամենափայլուն արտապայտութիւնը, այդ ամենաստորտ Կալեկին, որ միակ ինքն ըստ ինքեան Արփիարեանի քաղաքական մասն որդանել է՝ և այլն:
 (Սպտակ № 10, փետրվար 1897):

շուրջ իւր ճակատագրից Կենտրոնիս մեր կրկնակի դիմումները յետոյ: Դրա հետ միասին Կ. Պօլսի Հնչակեան վարչութիւնը Կենտրոնիս հարողից, թէ իր մօտ մտացի է ընդամենը երկու հազար ոսկիից քիչ աւելի գումար:

Իբր պատասխան այս պնդումներէ՝ Վերակազմեալ Վերոնական վարչութեան 1 դեկտ. 1896 Շրջաբերականի մէջ բերուած են հետեւեալ բացատրութիւնները:

Արտասպելով Հին Վերոնի յիշած՝ «Հնչակի» № 15 փետրար 1896 թւականի համարի յայտարարութիւնը, Վերակազմեալ Վերոնական վարչութիւնը ապացուցանում է, որ դա իրեն չի վերաբերում:

«Ինչպէս կը տեսնէք այս «յայտարարութիւնը», ընաւ Կ. Պօլսոյ Մասնաձեռնի խօսքը չը կայ մէջը: Եւ արդարեւ Կ. Պօլսոյ Հնչակեան վարչութիւնը ինքն առհասարակ էր այսպիսի յայտարարութեան մը հրատարակութիւնը, վասնզի հաստատութիւնները ինչպէս թէ Վերաջացած էին, սակայն զանազան քաղաքներ, նոյն իսկ Պօլսոյ կենդանի խաբարները ըստ իրեն իրարմ հարկերէ Կարեւի չէ անշուշտ մտքը անցունել թէ այս Յայտարարութիւնը կրնայ վերաբերել Կ. Պօլսոյ Մասնաձեռնին. երբ Կեդրոնը կը հրատարակէ հաստատութիւնը դրամը իրեն դրկել «Թեթիս կեդով կամ Մասնաձեռնի միջոցով», չաւանդներ թէ Պօլսոյ Մասնաձեռնին դրամ յանձնելու չէ»:

Եւ իբր ապացոյց, որ Հնչակեան նախկին Վերոնը իսկապէս դէմ չի եղել սպառնալիքով դրամ հաւաքելուն, Շրջաբերականում բերուած է Հնչակի 1896 մարտ 21-ի համարից մի քաղաք, ուր իմիջի այլոց ասուած է.

«... Ազգին աղքատի տղաքը իրենց իրաւունքէն զերտը, Զէյթունի Կերտները առանց վստօքի, առանց հացի պահելու համար տարածում ընողը, Հայաստանի սովեակներուն համար անկարեկիքը, երբ հաշի կուտայ արդար առաջ առաջ ի մեծ, ժողովուրդային զգացումն է որ անոր դազադին շուրջը սարսափահար կը գոչէ իր ասացուածը— «Աստու մատը կայ»:

Ինչ վերաբերում է 15-20 հազար ոսկու խնդրին, Վերակազմեալ Վերոնական վարչութիւնը բաւականանում է ջանալով իր մասնաձեռնի հաւատացները որ ինքը ստացել է Պօլսի հաշիւները, թէև չի կարողանում չաւելացնել որ «հարկ եղած հաշուական քննութիւնը պիտի կատարէ մասնաձեռնի մասնաձեռնի»:

Այդպիսով Վերակազմեալ Վերոնական վարչութեան Շրջաբերականը մուծն է թողնում Պօլսում ժողոված գումարների քանակութեան և գործադրութեան հարցը: Միև կողմից պարզ է, որ Հին Վերոնը դէմ չի եղել բռնի միջոցով դրամ ժողովելուն, թէև իր շրջաբերականում պնդում է հակառակը: Եթէ մեզ նկատեն, որ այս եղակացութիւնը բաւականաչափ հիմնաւորած չէ վերակազմաւորների բացատրութիւններում, ապա մենք կ'աւելացնենք, որ եթէ Հին Վերոնը իսկապէս հակառակ լինէր այդ միջոցին, նա մի սանտիմ անգամ չէր ընդունիլ այդ ճանապարհով ձեռք բերուած գումարներից. մինչդեռ մենք տեսնում ենք, որ ոչ միայն նա սիրով ստացել է 1,400 ոսկու գումարը, այլև—զայրանալով որ մնացած գումարներն էլ իրեն չեն ուղարկուում—բացազանջում է, «այդ 1,400 ոսկին էլ Կ. Պօլսի Հնչակեան վարչութիւնը հասցրեց Կենտրոնիս մեր կրկնակի դիմումներին Եւ յետոյ...»

Թէ ինչպէս կարող էին գործադրել Պօլսի այդ խոշոր գումարները, կարելի է ինթագրել հետեւեալից.

«Որոշ ներուի մեզ հարցնել այդ դիմակաւոր պարտներուն, թէ Պօլսոյ մէջ Զէյթունի ու յեղափոխութեան անձնով հաւաքուած անազն գումարները Պօլսի կողմից եւ Ռուսիայի ինչպէս նաեւ ուրիշ տեղերու մասնաձեռնի լուծմանը շահելու, ընկերներու խնդրերը վարձելով զանոնք գործիք ընկու, Արփիարի եւ իր սրբանախներու Լոստոնի ու Բարիզի մէջ գեղեցկանայ

մը վարելու եւ Պօլսոյ մէջ քանի «յեղափոխական» ներու տուները թաւաշայ ու ծանրագին կամ կարասներով զարդարելու համար յատկացնելը, միթէ: հանրութեան դրամը իր նպատակին գործածել է:

Ասոնք զբարտոնութիւն չըլլալէ զատ, դեռ շատ աղօտ կերպով կը պատկերացնեն ճշմարտութիւնը: Արդէն Պօլսին հասնող բազմաթիւ ընկերներ ու արժանահաւատ անձեր անհերքելի փաստերով կը հաստատեն այս բոլորը, եւ կը հաւատան թէ Պօլսոյ մասնաձեռնը գեղեցկաներու քոյն եւ խաւազաղմուկ ուր մ'է եղած «ընդ հոգմանարութեամբ Արփիար էֆէնտի» (Շրջաբերական Ռուսիայի Հնչ. մասնաձեռնին, թիւ 1):

Ընթերցողի հետ միասին մենք ևս տրամադիր ենք կարծելու, որ այս տողերը Հին Վերոնի կողմնակից մասնաձեռնի գրածը լինելով, կարելի է չափազանցութիւն համարել:

Իսկ թէ ինչպէս է ինքը Վերոնը գործածել իր ստացած գումարները, մենք այդ էլ չգիտենք: Գիտենք միայն այն, որ ոչ միայն զէնքի համար չեն գործադրուել, երկիր չեն ուղարկուել, այլ և

«Շրքեք մտածած չեն Երկրին մէջ թէ՛ զործող եւ թէ՛ քանտարեկուած զործիչ-ընկերներու նիւթական թշուառութեան մասին, եւ անոնց դրամական օգնութիւնները քորորովիս զլացած են: Նոյնիսկ հակառակ իրենց եղած ընկուածներուն մերժած են իրենց փոքրիկ գումարները քանտարեկու խոքորը հիւժող թանկագին ընկերները ազատելու»:

«Նկատելով որ հաշուետուները չունին, որով կարելի ըլլայ հաստատել թէ Կուսակցութեան դրամները խոթմտօքն գործածուած եւ Կուսակցութեան նպատակին յատկացուած են: Մինչ Կուսակցութեան դրամը մեծ մասամբ անպէտ տեղը ծախսուած ըլլալը յայտնուած է»: (Ածագիր)

Վերոնին «անյայտ պատճառներով ներս սպրդած», իր կեղտոտ անցեալով յայտնի Արփիարը Լծնդօն է գալիս: Եթէ չափազանցրած է Վերակազմեալ Վերոնական վարչութեան 1 դեկտեմբեր 1896 Շրջաբերականից առաջ բերած «ամենասիրալիր ընդունելութեան» փաստը, նրա հասցէին ուղղուած ճառը ևն. . . մի բան անհերքելի է մնում— «լրտես, յեղափոխական դրամ կլանողմասնիչ, հեղինակնշանաւոր Մեղայագրի» Արփիարը ընդունուում է Վերոնի մէջ և համարուում է ընկեր:

Վերոն մտնելով Արփիարը սկսում է ինտրիգներ սարքել: Վերոնը իմանում է այդ ինտրիգների մասին: Ինչ միջոցներով— «լրտեսներ» կարգելով և ում— Հնչակեան կուսակցութեան Զէյթունի «Ընդհանուր ներկայացուցիչ» Աղասուն և Զէյթունի Ընդհանուր Հրամանատար Ապահին: Բայց աւելի լաւ է խօսքը թողնենք հենց իրեն Հին Վերոնին.

«Արփիարեանի Լծնդօն զալուց ի վեր շանցաւ երկու երեք շաբաթ՝ այլ եւ այլ կասկածներ ծագեցան նրա ընթացքի նշկատմամբ, որ նա ունեցաւ նոյն իսկ իր Լծնդօն նրա միջոցին: Զէյթունից եկած վեց Հնչակեաններից երկուսը՝ Աղասիի եւ Ապահի «լրտեսութեամբ» ձեռք բերած վկայութիւններով, որպէս եւ ուրիշ վկայութիւններով անյայտնի եղաւ ու սպառնացվեց Արփիարեանի լարած դաւերն ու ինտրիգները»:

Սրանից յետոյ Արփիարեանը արտաքսուում է Հնչակեան կուսակցութիւնից, և նրա վճռագրի տակ ստորագրած ենք տեսնում իմիջի այլոց նաև Տամատեանի, Աղասու և Ապահի անունները:

Ուշագրութեան արժանի է և այն, թէ ինչ չարահնդութեամբ Վերոնը շեշտում է «լրտեսութեամբ» խօսքը, չակերտների մէջ առնելով նրան.

Ահա՛ բարոյական մթնոլորտ... Ինտրիգների, կասկածատուութեան, բացարձակ կեղծիքի, գեղեցկների ու լրտեսութեան այս միջավայրի հետ ծանոթանալուց յետոյ, նոյնիսկ ամէնաներողամու ընթերցողի համար հասկանալի են դառնում մի խուճը Հնչակեանների

զայրոյթով լցած Ըրջաբերականի հետեւեալ սողերը.

«Կեղոնը... աւելի կը նմանի Եղտըզի քան թէ Կեղոնի, և հոն տիրող «էժիպտացի» սուլթանականէն տարբերութիւն չունի»:
(«Մի կազմուի», 30 մարտ 1897, Լծոնոն):

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այս տեսակ բարոյական մթնոլորտը չէր կարող գրաւական լինել Հնչակեան Ընդհանուր Ժողովի յաջող ելքին: Իմենք հիմա այդ ժողովին:

ՀՆՉԱԿԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հնչակեան Ընդհանուր Ժողովը պիտի կայանար հէնց այդ ժամանակները: Երբ մի կողմից Հնչակեան Կեդրոնը ժողովի հրաւիրագրեր էր ուղարկում Հնչակեան մասնաճիւղերին, միւս կողմից Հնչակեան կազմակերպութեան մէջ կամաց կամաց պատրաստուում էր ընդդիմադիր կուսակցութիւնը: Հնչակեան կուսակցութիւնից արտաքսած Արփիարը, Պարիզ դնալով, բոլորովին տրամադրութիւն չէ ցոյց տալիս իր դէմ արձակած վճռին համակերպելու: Պարիզից նա շարունակում է սերտ կապ պահպանել Հնչակեան մասնաճիւղերի և գործիչների հետ, նոր թերթի պատրաստութիւններ է տեսնում, ծրարագիրներ է յղանում և ինչ... Ընդդիմադիր կուսակցութիւնը քիչ քիչ սկսում է ձևակերպել և ուժ է բուսանում, երբ Արփիարը լարում է Ռշտունուն ու Լծոնոն ճանապարհ ձգում և երբ Ռշտունի, Տամատեան և մի քանիսներ հեռանում են Հնչակեան Կեդրոնից: Իժևար չէ երևակայել թէ ինչ կը լինէր այսպիսի պարագաներում կատարած Ընդհանուր Ժողովը: Յիշենք այստեղ, որ Հնչակեան Կեդրոնը պընդում էր — իբր թէ կուսակցութեան ներքին օրէնքների վրայ հիմնելով — որ Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունեն բացի երկրի մասնաճիւղերից նաև Կովկասը, Պարսկաստանը, Կիպրոսը, բայց ոչ Բուլղարիան, Ռումանիան, Ամերիկան, Եգիպտոսը: «Ընդդիմադիրները» պահանջում էին և վերջիններիս մասնակցութիւնը: Այս խնդիրը, որ ահագին ժամանակ է խլել և առիթ է տուել երկար աղմուկների, իհարկէ չէր բըխում ոչ կանոնագրից և ոչ այլ հիմունքներից, այլ պարզապէս այն վերաբերումից, որ ունէին «արտասահմանեան» մասնաճիւղերը դէպի Հնչակեան Կեդրոնը:

Մի ուրիշ հանգամանք ևս մեզ պարզ ապացուցանում է, որ Ընդհանուր Ժողովի գլխաւոր զբաղմունքը պիտի լինէր ոչ թէ այլևայլ ընդհանուր յեղափոխական խնդիրներ, այլ կատարած զեղծումների քննութիւնը, աւելի պարզ ասած՝ հին և նոր Կեդրոնի խնդիրը:

Հին Կեդրոնի կարծիքով՝

«Ռուսականասար, նա (այսինքն Պօլսի դրամների խնդրը) պէտք է լինէր ընդհանուր ժողովի ամենամասնական խնդիրը: (Շրջաբերական 12-24 օգոստոս, 1896 № 1):

Իսկ միւս կողմից, «ընդդիմադիրների» կարծիքով՝

«Ընդհանուր ժողովը գլխաւորապէս պաշտօն ունի Կեդրոնին 9 տարւան համարը ամեն և ընտրել նոր Կեդրոնական վարչութիւնը»:
(Շրջ. Ակր. Կեդր. վարչութեան, 1 նոյեմբեր 1896):

Աւրեմ, «ընդդիմադիրները» հաշիւ պիտի պահանջէին Կեդրոնից, Կեդրոնն էլ Պօլսի մասնաճիւղից: Եւ որովհետև ոչ մի կողմը հնարաւորութիւն չունէր բաւարար հաշիւ ներկայացնելու, շատ հաւանական է, որ

Ընդհանուր Ժողովի այս «ամենածանր խնդիրը» հէնց սկզբից բաժանում առաջ բերէր: Բացի այդ, որքան պարզ էր, թէ հին Կեդրոնը ոչ մի տրամադրութիւն չէր ցոյց տալիս Հնչակեան կուսակցութեան ղեկը ուրիշն զիջանելու, նոյնքան պարզ էր և այն, որ մի շարք գործիչներ չէին խոյս տալիս «ազգային պաշտպանութեան» այդ ծանր լուծը իրենց վրայ առնելուց:

Ահա թէ ինչու աւելի նպատակայարմար էր երկու մասի բաժանելը: Իւրաքանչիւր մի մասը իր կողմնակիցներին սնհամեմատ աւելի մեծ դիւրութեամբ կարող էր հաշիւ ներկայացնել և, բացի այդ, այդ բաժանումը հնարաւոր էր դարձնում և հին Կեդրոնի գոյութիւնը և նորի ստեղծելը:

Այդպէս էլ եղաւ:

Առաջին ժողովը ընդդիմադիրների Ընդհանուր Ժողովը էր, որ տեղի ունեցաւ 1896, օգոստոս 8/20-ին:

Այս հանագամանքը մեզ իրաւունք էր տալիս սպասելու, որ երկար տարիների ընթացքում բուն գործի մէջ երևած գործիչները, մի անգամ մի տեղ համախմբած, իւրաքանչիւրը իր անձնական փորձառութիւնը ընկերներին յայտնելով, լուրջ քննութեան կ'ենթարկէին ժամանակակից դրութիւնը, կ'որոշէին յեղափոխութեան իրական պահանջները, նրանց գոհացում տալու համար գործնական միջոցներ կը գտնէին, և նախկին խնամակալութեան դառն ու դեռ թարմ տպաւորութեան տակ մի անգամ ընդմիջտ զգւանքով կը հրաժարէին որ և է խնամակալութեան լծից ու վստահ իրենց ուժերի, միմիայն իրենց ուժերի վրայ, սերտ կապ հաստատած իրար մէջ, կը ցրէին իրենց տեղերը, նոր ծրագրով, նոր եռանդով, ընդհատած գործը վերսկսելու: Յոյս ունէինք, որ նրանք հեռատեսութիւն կ'ունենային հէնց ժողովի ժամանակ արմատախիլ անելու կամ գոնէ չէզոքացնելու իրենց մէջ ընկած որոմները: Այս պայմաններում միայն հնարաւոր էր վերջ տալ Հնչակեան կուսակցութեան «տ ա գ ն ա պ ա լ ի ց» դրութեան և մարքել հեղձուցիչ մթնոլորտը:

Մենք այն ժամանակ դեռ չգիտէինք, որ Հնչակեան Կեդրոնը իր կողմնակիցների հետ միասին կազմելու է առանձին, նոյնպէս Ընդհանուր Ժողով, որ Հնչակեան կազմակերպութիւնը իրականապէս բաժանելու է երկու մասի: Մեզ յայտնի չէին նոյնպէս շատ իրողութիւններ Հնչակեան կուսակցութեան վերաբերեալ, որոնց մասին քիչ վերև խօսեցինք: Բայց որովհետև ընդդիմադիրների ժողովը յայտարարեց իրեն Հնչակեան Ընդհանուր Ժողով, մենք հաւատացինք, մանաւանդ որ մեզ յայտնի էր, թէ նրան մասնակցում էին համարեա բոլոր Հնչակեան գործիչները:

Իսկ թէ այդ ժողովը քաջութիւն պիտի ունենար համարձակօրէն անցեալի մէջ խոշոր փոփոխութիւններ մտցնել դրա ապացոյցը մենք ունէինք: Չնայած այն լարած դրութեան, որ գոյութիւն ունէր մինչև այդ ժամանակ Դաշնակցութեան և Հնչակեան կուսակցութեան միջև, Հնչակեան ժողովը չվարանեց դեռ սեպտ. 12-ին, այսինքն համարեա իր կանոնաւոր պարապմունքների սկզբին, դիմել մեղ միութեան կամ համերաշխ գործակցութեան առաջարկութիւնով: Ի՞նչ այդ դիմումից առաջ, Լծոնոն պատահած մեր մի երկու ընկերների տեղեկութիւնների հիման վրայ, մենք արդէն նպաստաւոր կարծիք էինք կազմել այդտեղ գումարած

հնչակեանները որամազրուութեան մասին: Աւելորդ է ասել, թէ, չնայելով անցեալի բոլոր դառն փորձերին ¹⁾, ինչ բաւականութիւն պատճառեց այդ դիմումը Դաշակեցական մարմիններին, որոնք այդ ժամանակ իրենց գործունէութեան սահմանը լայնացնելու ձգտման մէջ աւելի քան երբեք զգում էին Հնչակեան կուսակցութեան հետ համաձայնութեան անհրաժեշտութիւնը:

Դիմումն արած էր Հնչակեան Ընդհանուր Ժողովի յանձնարարութեամբ առժամայն վարչութեան կողմից և այնպիսի մի ժամանակ, երբ կուսակցութիւնը դեռ ևս չէր վերակազմել, ուրեմն երբ դեռ յայտնի չէին կարող լինել կատարելիք փոփոխութիւնները: Հասկանալի է, թէ ինչ հետաքրքրութեամբ մենք պիտի սպասէինք ժողովի ելքին և թէ ինչու մենք մեր պատասխանի մէջ, փափագ յայտնելով հանդերձ կանոնաւոր բանտէրացութիւններ սկսած անմենել Հնչակեան կուսակցութեան վերակազմելուց յետոյ միայն (այդ փափագը յայտնեցինք անցեալի «փորձերը» ինկատի ունենալով և ոչ «գործերը», ինչպէս «Մարտ»-ի խմբագրութիւնն է կարդացել), պատրաստահանութիւն յայտնեցինք միևնոյն ժամանակ բանակցել մասն առ մաս կերպով և փոխադարձաբար ծանօթանալ: Այս մասնաւոր տեսակ-

ցութիւնը, նոյնիսկ Ընդհանուր Ժողովի ընթացքում, հնարաւոր կը դարձնէր միութեան յարաբերութեան շատ պայմաններ անսղուց նախատեսել և մի քանի խոջընդոսներ հէնց սկզբից վերացնել...

Այս բոլոր յոյսերը մենք տածում էինք և մասամբ շարունակում էինք ասենք վերակազմեալ ¹⁾ Հնչակեան Ժողովի աւարտուածից յետոյ էլ, քանի դեռ յայտնի չէին մեզ ոչ այդ ժողովի մտաւոր գործը, ոչ առաջ դառնիք փոփոխութիւնները, ոչ միջնորդարի ազականութեան սասակութիւնը և ոչ ազնիւ Հնչակեան գործիչներին անտրուտիւնը այդ միջնորդարի դէմ մաքրուելու:

Սակայն շատ ժամանակ չանցան, իրար ետեկից տեղացող փաստերը հետզհետէ մեզ յուսախաբ արին և վերջինիցը բերին այն համոզման, որ միութեան հարցը, հակառակ վերակազմեալ Հնչակեան Ընդհ. Ժողովի արատայաբան անկեղծ ցանկութեան և Դաշակեցական մարմինների լիակատար յօժարութեան, անկարելի է իրականացած տեսնել:

Անցնենք դրա պատճառներին: Յենտենք, թէ վերակազմեալ Հնչակեան Ընդհ. Ժողովը, միութեան կամ համարաշէն գործակցութեան խնդիրը դնելով ինչ դրական միջոցներ ձեռք առաւ այդ խնդրի ապագան ապահովել լու տեսնելը, թէ կարողացաւ նա լարդեօք մեզ յեղափոխական գործող մարմին, պահպանել իր յեղափոխական սկզբունքները և այլն... Սակայն հէնց այստեղ էլ պարտք ենք համարում յայտնել որ այս բոլոր պահանջները մենք պարտաւոր ենք դնելու իսկապէս վերակազմեալ Կերթումական վարչութեան և ոչ ամբողջ կուսակցութեան, որովհետեւ Ընդհանուր Ժողովը, ընտրելով նոր Կերթումական վարչութիւն, համարեալ թէ ամեն ինչ ձգել էր նրա վրայ, ամեն ինչ նրան էր հաւատարմել:

Այդպէս՝ վերակազմեալ Կերթումական վարչութեան 18 նոյեմբեր 1898 Էջմիածնի Կարգում ենք հետևեալ առիւթը.

«Մենք մտաւոր ժողովն զմաստապէս պատճառ ունի կողմնին օտարումս կամեղը ասնիւ եւ դատել նոր կերթումական վարչութիւնը, որ ինքն զի ան սրտէ և ատարեւոր գործն մը, ցետուարս մեւ է գաղանից երկուսն զաւուր Կարեւորականութիւն շն կայ»:

Ընթացողից ինչպիսիք ենք աւշարութիւն դարձնել այն բանի վրայ, որ այս առիթը գրած են ոչ թէ ժողովից աւազ, այլ՝ յետոյ, սերեմ հաստատում են այն, ինչ արդէն կատարւած է եղել:

Իսցի այդ «Մարտ»-ի թիւ 10-ի մէջ ետն երկրի վերաբերմամբ գտնում ենք հետևեալը.

«Հնչակեան իւրաքանչեւ ընկեր ժողովն սեղանին վրայ դրսւ իւ փորձառութեան յիշատակագրոյ, որուն ուժն ունի Կարեւորական և Կարեւորականութիւնն է՝ միւսմանով յիշատակեալս կուսակցութեան շնորհակց, կեղծութիւն և սեղծութիւն ազատ ինչ պաշտպանութեան»:

Սնտարտիք և անմիջիցէր եղանակցութիւն...

Պէջեալ հետ ամեն կողմն Հնչակեան ընկերները թէ իբր պատգամաւոր կուսակցութեան բոլոր կառուցում, թէ իբր արդարին իրկութեան հիմաւորաց Գլխակեան

1) Անա՛ Հնչակեան Կուսակցութեան հետ միութեան մասին տեղի ունեցած առաջին բանակցութիւնների կարծ պատմութիւնը: 1890 թւի ամսուը՝ Պոլսի ցոյցից յետոյ, երբ կազմակերպուում էր «Դաշակցութիւնը», Ռուսաստան եկաւ Պոլսի Հնչակեան ներկայացուցիչները մէկը (Խ.): Մեր ընկերների դրա հետ ունեցած տեսակցութիւններն ու խօսակցութիւնները առաջ բերին միութեան մասին որոշ համաձայնութիւն, որի պայմանները ինքը ներկայացուցիչը հարողից «Հնչակ»-ի խմբագրութեանը: Իբր պատասխան այդ զրուցումն «ներկայացուցիչը ստաւ՝ կարգադրութիւնից մը բաւականին պարզապէս հետագիւր — «C'est en fait l'illage» (այդ երկնայութիւն է), — որով խմբագրութիւնը կտրուկ կծրավով վերջ էր դնում միութեան այդ առաջին փորձին: Անցան որմանից յետոյ շարաւիներ, ամիսներ, եւ անա Դաշակցութեան Կերթումական վարչութեանը (այս ժամանակ ապակերթումացում դեռ չիւր ընդունւած) ներկայացուցում ուրիշ պարուն (Մ.), ունենալով իր ձեռքին Հնչակեան Կուսակցութեան երկու պատասխանատու մարմիններից իրեն արած զբաւը. Լիւազուրութիւնները մեզ հետ բարակցելու եւ համարձայնութիւն վերջնական — պայմանները ստեղծուած են և ստորագրուած են Կարեւորական Կարգում: Այդ լիւազուրութիւններից մէկը կրում էր Հնչակեան Կուսակցութեան Կերթումի անուն, միւսը՝ «Հնչակ»-ի խմբագրութեան: Կրկին սկսեցին խօսակցութիւններ: Պարզումական ներկայացուցիչն միացաւ եւ վերաբեմալ անալիզը ըստիկող, ու վերջինիցը մեակեցին միասնայութեան նոր պայմաններ, որոնք — երկու օրիսակ — ստորագրուցին թէ դաշակցականներն եւ թէ հնչակեան կրկու ներկայացուցիչներն կողմն: Համաձայնութեան թղթի այդ օրիսակներից մէկը մասը մեր վարչութեան մաս, միւսը յամանակ հնչակեան Լիւազուրն ուր հարկն է ուղարկելու Կարեւորի՛նչ եկաւ այդ երկրորդ օրիսակի գլխին — միջին այժմ՝ էլ յայտնի չէ մեզ Փաստը սա է ստեղծել, որ այն ժամանակ, երբ մենք ամեն բան արեւն վերջացած համարելով դրամ էինք փոխադրում «Հնչակ»-ի խմբագրութեանը և սպասում էինք թղթի մէջ փոխութեան յայտարարումից, — մի գնդիցիկ օր ստացանք «Հնչակ»-ի խմբագրութիւնից... Կամայնաբար խմբագրութեան նոր պայմաններ... Ինչպէս կարող էր արտատալ այս ամենը — դա մի հանդուրդ է, որը զուցէ մասնաւոր կարող էր պարզել պայմանագրի ստորագրող հնչակեան մի ներկայացուցիչը (Խ.) եւ մի երրորդ հնչակեան (Չ. Խ.), որմն, իբրեւ արդէն մեզ հետ միացածներ, թէեւ Կովկասից միկեցան դաշակցական գործերով, բայց միանգամայն անպատեհ կերպով փոխանակ իրենց յանձնարարած տեղերը զնայու՝ ծնել էին իրենց մանապարզ դէպ «Հնչակ»-ի խմբագրութիւնը... Ինչեւեցէ, բայց յիշեալ նոր պայմանները այնքան հեռու էին արդէն ընդունւած եւ ստորագրւած պայմանագրից եւ այնքան վաղով, որ կարող էին անել մեզն այն, ինչ արեցին — այն է՝ վերջնապէս վերջեցնել միութեան խնդիրը...

1) Երբ ինչ Կերթումի իւ կուսակցիցներ հետ միասին կնքած իրարմէս Ընդհանուր Ժողով, առաջինը լինի իրեն կողմն «Վերակազմեալ»

դինսորներ. . . Հայրենիքի աղէտներուն արհեստակարար սիրտով վհաներ, հայրենիքի փրկութեան հաւատքին անընկճելի հաւատարմներն» (Աւերակազմեալների «Հնչակ», 24 սեպտեմբեր 1896) 9 տարւայ գործունէութիւնից յետոյ, հազար և մի դժբաղդութիւններ յաղթելով գալիս են, համախմբուած, առաջին անգամ Ընդհանուր ժողով գումարում, այն էլ կուսակցութեան տագնապալից դրութեան միջոցին, որպէսզի. . . կատարուելիք գործերի մասին լուծութիւն պահանջեն, մնան ընդհանուր խօսակցութեան այն սահմանում, որից դուրս կարող է սեւեռ գաղտնիք երևան գալ ընտրեն մի կեդրոն «ազգային պաշտպանութեան» (!!!), յանձնեն նրան կատարելիք գործերի որոշումը և ցրեն. . . Այս բոլորը իսկապէս դառն է, ցաւալի և բողբոջին պատու չի բերում հնչակեան գործիչների յեղափոխական հասունութեան. . .

Ահա ձեզ և «սահմանափակ կեդրոնացում», որ իբր թէ մտել է Աւերակազմեալ Հնչակեան կուսակցութեան կանոնագրի մէջ:

Բայց այսպէս կամ այնպէս, երբ Աւերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը իր ամբողջ գործի ղեկը դրնում էր նորընտիր կեդրոնական վարչութեան ձեռքը, նրան էր յանձնում և միութեան ինդրի բանակցութիւնները, մեզ մնում էր միայն մեր պահանջները դնել գլխաւորապէս այդ վարչութեան: Տեսնենք ուրեմն, թէ որքան յաջողութեամբ է նա առաջ տանում յեղափոխական գործը, թէ պահանջել է նա արդեօք յեղափոխական սկզբունքները. տեսնենք նրա վերաբերումը դէպի Դաշնակցութիւնը, որի հետ յանձնարարած էր իրեն միութիւն առաջացնել փորձերը հասկանալ ուսուցասցիւրի դէմ սկսած արշաւանքի օգտակարութիւնը. տեսնենք, վերջապէս, թէ ովքեր են այն ղեկավարները, թէ կեդրոնական վարչութեան մէջ և թէ նրա շուրջը, որոնք ոտի պիտի կանգնեցնէին Հնչակեան կուսակցութիւնը, և թէ որքան կարող էին անկեղծ լինել նրանց միութեան քարոզները:

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ՈՒԺԸ

«Մարտ»-ի առաջին համարի առաջին յօդուածում կարդում ենք.

«Մեր անցեալը, մեր փորձառութիւնը, զօրեղ կազմակերպութիւնը որով օժտուած ենք կը ծանրացնեն մեր վրայ այնպիսի պարտականութիւններ, որոնց ենթարկուած չեն ուրիշ ոչ մէկ նայ անհատ, ուրիշ ոչ մէկ Յեղափոխական կուսակցութիւն»:

Այս խորհրդաւոր խօսքերը, համարձակ տօնը, Հնչակեան կուսակցութեան վրայ ծանրացած բացառիկ պարտականութիւնները, անշուշտ մեծ սպաւորութիւն են թողնում ընթերցողի վրայ և ակամայ տրամադրում են նրան երևակայելու այդ կուսակցութեան մէջ անսովոր մի ուժ, չտեսնուած մի գործ:

Տպաւորութիւնը աւելի է սաստկանում, երբ հասնում ես հետեւեալ տողերին.

«Հնչակեան կուսակցութիւնը վերակազմուելէն ի վեր լուծութեան մէջ աշխատելով այնպիսի գործաւոր դիրք մը ստացաւ, ազգային այնպիսի մեծամեծ շահեր իր պաշտպանութեանը տակ առաւ որ գերագոյն պարտականութիւն մըն է իրեն համար ամէն մէկ քայլը խորհելով եւ հարուստով փոխել»:

Իսկ յօդ. 2 «Բան մը ըրէք» յօդուածի մի քանի տողերը աւելի ազգու կերպով են պատկերացնում Աւերակազմեալ կուսակցութեան զօրաւոր դիրքը (ապրիլ 97):

«Բան մը ընել», բայց անոկէ աւելի ինչ դիւրին բան կայ. Հայ ժողովուրդը ծնած է ոչ թէ տանակներով, այլ հարիւրներով, այլ հազարներով հայրենասուէր, անձնուրաց, քաջ կրիստասարներ. . . Եւ յետոյ, ուսմբը, ու ժանակը այնպէս դիւրութեամբ կարելի է Պոլիս մտցնել ինչպէս Վասնայէն բերած հաւկիթը ու Միլանի կարպը: Քսնի մը մարդ սպանել, — ճանճ սաստիկ ցնելու չսի հեշտ գործ է: Թիւրք փաշաներ մէջտեղէն վերցնել — օ՞րը կուզես, դրամատուններ, պաշտօնաւաններ կոխել, — Վոսիորի վրայ հաճոյալիւ ուղեւորութիւն մը ընելէն աւելի դիւրին է. . .»

Դժբար չէ երևակայել թէ այս տողերը ինչ չար նախանձ կը շարժեն Պոլսի մեր ընկերների սրտերում, որքան չնչին կրգրան իրենց՝ Բաբէկէի, Գնունու հոգիները Աւերակազմեալ վարչութեան այս առասպելական ուժի դիմաց. . .

Նոյն համարից բերենք մի կտոր, որ աւելի պարզ գաղափար է տալիս հին և նոր յեղափոխական կազմակերպութիւնների մէջ եղած տարբերութեան մասին.

«Իրենք (անձնուէր գործիչները) բաւական հեռաւեց եւ կարող չի գտնուեցան ազգային դատին համար կեդրոն մը ստեղծելով ամբողջ հայուն թիւնը անոր շուրջը բոլորելու: Յեղափոխական կուսակցութիւններն ալ, կամ աւելի ճիշդը անոնց վարիչներն ալ, ո՛չ միայն չուզեցին մօտենալ տաղանդի ու դրամի դասակարգերուն այլ եւ ըրին ինչ որ կարելի էր դանոնք իրենցմէ հեռացնելու համար: Հիմա ալ չը խօսինք այդ անցեալին վրայ. Հնչակեան կուսակցութեան Ընդհանուր ժողովը այն անմէնը փոխեց: Ժողովը բաղկացած էր վերացական կամ ինքնամոլ ընկերներէ: Հայ ժողովուրդը, Թիւրքիոյ կացութիւնը լաւ գիտցող, ու եւրոպական քաղաքականութեան հետամուտ ժողովականները նոր ճամբայ մը գծեցին ապագային համար. վեց ամսէ ի վեր է որ կուսակցութիւնը այդ ճամբէն կը յառաջանայ»:

Ուրեմն՝ Հնչակեան կուսակցութեան Ընդհանուր ժողովը «այս ամէնը» փոխել է: Նա ուրեմն ընտրել է այն բաղձալի կեդրոնը, որի շուրջը ամբողջ հայուն թիւնը պիտի բոլորի: Նա մօտեցրել է յեղափոխութեան գործին տաղանդի և դրամի դասակարգերը և անշուշտ տաղանդի դասակարգը ամփոփուել է գլխաւորապէս կեդրոնական վարչութեան մէջ, այլապէս նրան չէր սաղիլ «ազգային պաշտպանութեան կեդրոն» կոչումը. . .

Դրամի դասակարգն էլ Աւերակազմեալ կուսակցութեան է մօտեցրել: Աւերացած է ուրեմն այն առաջնակարգ խոչընդոտը, որ ամէն մի քայլափոխում գալիս ցցուում է գործիչի առաջ. . . Այդ է դուցէ պատճառը, որ Աւերակազմեալ վարչութիւնը կարողանում է զարմանալի դիւրութեամբ ունենալ, ու ժանակ փոխադրել, դրամատներ կոխել. . .

«Հայ ժողովուրդը, Թիւրքիոյ կացութիւնը լաւ գիտցող ու եւրոպական քաղաքականութեան հետ ամուսնացած ժողովականները նոր ճամբայ մը գծեցին ապագային համար»:

Այդ «նոր ճամբան», որով կուսակցութիւնը «վեց ամսէ ի վեր» (հիմա կարելի է ասել 30 ամսէ ի վեր) կը յառաջանայ տաղանդի առաջնորդութեամբ,

այնքան խորհրդաւոր և միաժամանակ դիւթիչ է, որ երբ յանկարծ լսուով է «Մարտ»-ի ցասկոտ բացազանչութիւնը. «Այսքան զարհուրելի փորձութիւններէ վերջ, այսքան դառնաթոյն բաժակներէ յետոյ չայ ժողովուրդը չզգար տարբեր առաջնորդութեան մը պէտքը. (Թիւ 1, ՌՇատ չի խօսինք)» — որ յեղափոխականը կարող է իրեն զսպել և գլխապատառ շնտուել այդ ամենակարող առաջնորդներին գիրկը:

Սակայն... Տէնց նոյն «վեց ամսւայ» ընթացքում
1. Զիթճեանը գրում է Սուրենին (Վեդրօնի անդամ):

97 Յունվար 7

Ազնիւ ընկեր,

«Ստացած եմ նամակդ, և շատ տագնապեցայ, երբ այդպէս պատկերացուցաւ աչքիս առջեւ ձեր տնտեսական վիճակը. միակ միութեանք մը ունեցայ, այն էր. Մօլտօնի դրամի մասին բան գրած էիք. ուստի խորհեցայ, թէ այդ նամակդ գրելէդ ետքը շուտով ստացած կըլլաք դայն և քու անտեսութեամբդ կապիք մինչև կարող կըլլանք կ'ուրիկ գումարներ մը զրկելը:

Շիտակն ըսելով, նամակդ ոտքս գետնէն կտրեց. յոստամ թէ կապիք մինչև եւ որ մենք կարենանք մեր նպատակներն Ձեզ հասցունելը:
Եթէ վարչութեանդ դանձին պատճառաւն է որ անցապիք կուզես, այդ խնդիրն all right կընենք... Ես այն գաղափարը առի այդ գրելէդ թէ անօթու թեան խարաղանը պիտի ցրուէ Ձեզ:
Քիչ մ'ալ գէզ գէզ կ'ու թիւն (ինքն է ստորագրել) պիտ ընէի, իսկ ժամանակս չներեր այս օր, շատ դրաղած եմ. Չերմ սիրով բարեւելով քեզ մնամ քոյդ,
Գ. Զիթճեան»

«Յուսամ թէ կապիք—«միութարում է պ. Զիթճեանը և չի սխալուում: Վեդրօնի անդամները պարում են, երևի Մօլտօնի դրամը վոյայ է հասնում և մինչև իսկ թող չի տալիս, որ «անօթութեան խարաղանը» ցրուէ «ազգային պաշտպանութեան Վեդրօնի» անդամներին:

2. Տամատեանը գրում էր Վեդրօնին 1897 փետրուար 1-ին, Մանչէսթրից:

«Ձեմ կրնար պատմել թէ ուսելիքի և այլ ծախքերու մէջ որչափ խնայողութիւն ըրի, որպէս զի նոյն իսկ այստեղի ամենամտերիմ ընկերներու ալ բոլորովին չմերկայնեմ մեր կացութիւնը, իրենց օգնութեան կաթակով...»

«Այսօր մեր ամենաստիպողական խնդիրը մեր դրամական տագնապն է. առանց մեր նիւթական վիճակն ապահովելու չենք կըրնաք մեր իբր մարմին մը գոյութիւնը իսկ պահպանելը... Գիտեմ թէ ձեր ձեռքը համելիք այս 15 ոսկին շատ քիչ բան մ'է, բայց ալ մէկ քանի օրէն այստեղի կացութիւնը կը պարզուի և եթէ յաջողութեամբ մ'ալ չունենանք (որ չեմ կարծեր) գէթ 20-30 ոսկի փոխառութիւն մը կընենք և այս կերպով երկու և երեք շաբաթ ալ կանցընենք, մինչև եւ որ Ամերիկայի ալ կը շարժի վերջապէս: Իմ յոյսս մած է Ամերիկայի վրայ, թէ եւ մինչև հիմա բան մը չըրին»:

Ապա խորհուրդ է տալիս եռանդուն կերպով մասնաձիւղերից փող պահանջել, բայց առանց յայտնելու իրենց տաքնապալից դրութիւնը, որովհետև «անօ»

թի (ինքն է ստորագծել) մարդը, երբ յայտնւի թէ անօթի է, կը դատապարտուի անօթի մեռնելու»

3. Ամերիկայի Հնչակեան Նահանգային Վարչութեան 7 նոյեմբեր 1896 Շրջաբերականի մէջ կարդում ենք:

«Մեր նախորդ շրջաբերականս յոյս յայտնած էինք թէ հաստի պիտի վերսկսուին Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան կանոնաւոր գործառնութիւնը և պաշտօնաթերթին նրատարակութիւնը: Ուրախ ենք այժմ, որ մեր յոյսերուն մին իրականացաւ և միւսն ալ շուտով կ'իրականանայ: (Ինչու է գալիս, որ վարչութեան կանոնաւոր գործառնութիւնները դեռ չեն վերսկսուել... և նահանգային վարչութիւնը միութարում է ամերիկեան հնչակեաններին «Մարտ»-ի վերսկսման իրողութիւնով միայն...)

«Կը յիշէք, անշուշտ, որ ըսինք թէ Կեդրոնական Վարչութեան ծանօթ անդամներու վիճակին հիմնական պատճառը անոր անդամներուն իրարմէ հեռի գտնւիլն էր, որոյ ալ միակ պատճառը դրամի չզայութիւնն էր: Գիտէք, թէ հնչակէս երբեմն միմիայն երկու հոգի մնացին Կեդրոնական Վարչութեան կեդրոնավայրը, այն ալ անօթի լիորով ահաւոր պատասխանատուութեանց տակ»

(Այդ երկուսն են Տամատեան և Արիսարեան, իրար հետ կուսած):

«Ամենս զրկենք զիրար, բարձր պահենք կուսակցութեանս արհեստները Դրօշակը, որոյ առջև խոնարհին մեր անբարտաւան թշնամիները, որոնք մեր վերքերուն մէջ իրենց սրբապիղծ հացը կը մնառնեն. որոնք պատրաստ կանգնած կան մեր անկամանը վրայ դեւային քրքիչներ արձկելու...»

Զօրեղ կազմակերպութիւնճանր պարտականութիւններ... Զօրաւոր դիրք, ազգային մեծամեծ շահեր... Տաղանդի, դրամի դասակարգեր... Տարբեր առաջնորդութեան պէտք... — դեռ շարունակում են հնչել այս հուժկու խօսքերը ընթերցողի ականջում... Բայց ո՞ր է այս բոլորը, ո՞ր...

Եւ երբ մի մարմին հրապարակօրէն յայտարարում է, թէ յընդամենը մէջ աշխատելով այնպիսի զօրաւոր դիրք մը ստացաւ, ազգային այնպիսի մեծամեծ շահեր իր պաշտպանութեանը տակ առաւ...»

Երբ նա թիւք փաշաներ է մէջ տեղից վերցնում, պաշտօնատներ, դրամատներ կոխում, մարդիկ ճանձի պէս սատկեցնում աւելի հեշտ, քան դիցաբանական աժդահաները, իսկ իրականութեան մէջ, ստացած գումարները իր ապրուստին ծառայեցնելով հանդերձ, շարունակում է անօթի մալ... երբ յեր շուրջը ամբողջ հայութիւնը «բոլորելու յաւակնութիւն ցոյց տոււ, Վեդրօնը չի կարողանում իր ընկեր հնչակեաններին իրեն հետ կապած պահել. երբ ինքը այդ Վեդրօնը, անընդունակ գտնելով իր սեփական անդամների ընդամենը 5 հոգու մէջ համերաշխութիւն պահպանելու, կազմալուծում է. երբ վերջապէս ազգային պաշտպանութեան Վեդրօնը քիչ մօտիկից նայելիս, ներկայանում է հասարակութեան առաջ իբր կեդրոն... ստամոքսային պաշտպանութեան... — քրքիչներ չէ, որ մենք արձակում ենք Վերակազմալ կուսակցութեան անկման վերայ... չէ, մենք մեր զգանքն ենք արտայայտում դեպի ճոճան խօսքերի հեղինակ Վերակազմալ շարժատանը, մենք միայն խղճալ կարող ենք միամիտների այն բանակի վրայ, որ բերանը բաց «ազգային» մեծամեծ շահերու պաշտպանութիւնն» է սպասում այդ թօղ փչող «առաջնորդներից»:

(Շարունակելի)